ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63
(091) 45 90 47
(077) 06 28 02

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2: Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 2000:

ISSN 1829-3468
14008>
9 771829 346006

# Սյունյաց երկիր

ԵՐԵՔՇԱԲԹԻ
22 ԱՊՐԻԼԻ 2014Թ № 8 (316)

www.syuniacyerkir.am

**...Էլի՛ ես որբ ու արնավառ իմ Հայաստան-յարն եմ սիրում:**

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ




15 ապրիլի 2014թ. Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ակադեմիական թատրոնում

## Օրը շնչում էր Սահյանով

**Մշակույթ**

Մայրաքաղաքում Համո Սահյանի 100-ամյակին նվիրված հանդիսությունները նրա ծննդյան օրը՝ ապրիլի 14-ին, սկսվեցին Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում: Բանաստեղծի շիրմի մոտ հավաքվել էին գրողներ, գրականագետներ, սահյանական պոեզիայի երկրպագուներ, ԱԺ պատգամավորներ, կառավարության անդամներ, բանաստեղծի հարազատները, նրա որդին՝ Նաիրի Սահյանը: Երեւանի Սահյանի անունը կրող դպրոցի աշակերտներն ասմունքում էին պոետի բանաստեղծություններից, ձայնասփյուռից տարածվում էին նրա բանաստեղծությունների տեքստերով երգեր, բանաստեղծի կենդանի խոսքը: Հիշատակի խոսք ասաց Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանը՝ մասնավորապես նշելով, որ ճշմարիտ բանաստեղծները միայն ծննդյան օր են ունենում, մահվան օր չեն ունենում, քանզի ժողովուրդն իր հիշողության մեջ մշտաբորբոք է պահում նրանց հիշատակը, կենսագրությունը, բանաստեղծական ժառանգությունը: Թումանյանի, Իսահակյանի, Չարենցի կողքին այդպիսի մեծություն է Համո Սահյանը՝ մեր ժամանակների մեծ բանաստեղծներից մեկը: «Համո Սահյան գիտամշակութային կենտրոն» ՀԿ նախագահ, բանասիրական գիտությունների դոկտոր Շչորս Դավթյանը ներկաներին հայտնեց, որ ընթերցողի սեղանին շատ շուտով կդրվի Սահյանի գրական ժառանգության քառահատորյակի երկրորդ հատորը (պետպատվերով), հինգերորդ անգամ վերահրատարակվել է «Ինձ բացակա չդնեք» ժողովածուն (գրքի հովանավոր՝ Սուրեն Խաչատրյան):

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մտավորականության անունից ողջույնի խոսք ասաց ԼՂՀ գրողների միության նախագահ Վարդան Հակոբյանը:

Միջոցառումների շարքը շարունակվեց Ազգային գրադարանի դահլիճում: Հուշ-ցերեկույթը վարում էր Ազգային գրադարանի հանրության հետ կապերի եւ միջոցառումների կազմակերպման բաժնի վարիչ Անահիտ Մանուչարյանը: Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Դավիթ Գասպարյանը մինչեւ հոբելյանի առթիվ բարեմաղթանքի խոսք ասելն արժանին մատուցեց «Սյունյաց երկիր» թերթի խմբագրությանը՝ բանաստեղծի 100-ամյակի առիթով ստվարածավալ թերթային մի համար թողարկելու առիթով: Գրականագետն իր խոսքում կրկնեց թերթին տված հարցազրույցում իր ձեւակերպած միտքը՝ «Համո Սահյանի տեղը Հովհաննես Թումանյանի կողքին է»: Իր հակիրճ խոսքում Դավիթ Գասպարյանն արժեւորեց Սահյանի քնարերգության տեղն ու դերը հայ արդի պոեզիայի համակարգում:

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 3

## Հովիկ Աբրահամյանը՝
### Հայաստանի Հանրապետության վարչապետ

**ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի 2014թ. ապրիլի 13-ի հրամանագրով Հովիկ Աբրահամյանը նշանակվել է Հայաստանի Հանրապետության վարչապետ:**

Ապրիլի 14-ին Սերժ Սարգսյանը կառավարության անդամներին է ներկայացրել ՀՀ նորանշանակ վարչապետին: Նախագահը հայտարարել է. **«Մենք քսան օրվա ընթացքում վարչապետի հետ միասին ձեւավորելու ենք նոր կառավարություն: Այն ժամանակ էլ կառավարության խնդիրների մասին հանգամանորեն կխոսենք»:**

Վարչապետ Հովիկ Աբրահամյանը շնորհակալություն է հայտնել նախագահին՝ վստահության համար եւ նշել. **«Պարոն նախագահ, կցանկանայի իմ գործընկերներին ասել, որ մենք որեւէ կողմնորոշում որեւէ թեկնածուի վերաբերյալ չունենք, եւ ես պետք է խնդրեմ բոլոր իմ գործընկերներին՝ ավելի մեծ եռանդով շարունակել իրենց պարտականությունների կատարումը: Սահմանադրությամբ սահմանված ժամկետում կներկայացնենք նոր կառավարու-**

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 6



ՖՈՏՈԼՈՒՐ

## Մեղրին վերածվում է մեռյալ գոտու

**Այսօր Հայաստանի տնտեսական աճի «քարշիչ ուժը» հանքարդյունաբերությունն է: Օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռում ներկայումս հաշվառված է հաստատված պաշարներով պինդ օգտակար հանածոների ավելի քան 670 հանքավայր, այդ թվում՝ 30 մետաղական: Շահագործվում են հանքավայրերից շուրջ 400-ը, այդ թվում՝ 22 մետաղական, որոնց օգտակար հանածոների թվում առկա են 7 պղնձամոլիբդենային, 4 պղնձի, 14 ոսկու եւ ոսկի-բազմամետաղային, 2 բազմամետաղային, 2 երկաթահանքային եւ 1 ալյումինահանքային հանքավայր: Դատելով մետաղական հանքավայրերի համար տրված եւ տրվելիք արտոնագրերի քանակից՝ 150-ից ավելի, առաջիկա տարիներին մետաղական նոր հանքավայրերի քանակը կհասնի շուրջ 200-ի:**
**ՀՀ իշխանությունները տարբեր խոսափողներով հայտարարում են, թե հանքարդյունաբերությանը զուգահեռ կարելի է հաջողությամբ զարգացնել նաեւ գյուղատնտեսությունը: Սակայն դառն իրականությունը հակառակն է փաստում՝ Հայաստանի այն տարածքները, որտեղ ինտենսիվ կերպով զարգացնում են հանքարդյունաբերությունը, կյանքի համար անպիտան են դառնում:**

Մեղրու տարածաշրջանն այսօր լուրջ խնդիրների առջեւ է կանգնած: Այնտեղ գործում են Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատը, Լիճքվազ-թեյ եւ Տերտերասար հանքավայրերը: Հայաստանի կանաչների միության նախագահ Հակոբ Սանասարյանի տվյալներով՝ արդեն մոտ 18 նոր հանքավայրի լիցենզիաներ են տրված այս տարածաշրջանում:

**«Այդ հանքերն իրականում հանքերեւակումներ են: Այդ «հանքավայր» կոչվածներում կան ոսկի, արծաթ, պղինձ, մոլիբդեն եւ օգտակար այլ տարրեր, սակայն ցածր պարունակությամբ, եւ եթե այդ հանքերը ենթարկվեն հարկման, ինչպես տնտեսության մյուս ոլորտներում է, ապա դրանք ոչ միայն շահութաբեր, այլ նաեւ ծախսածածկող չեն լինի: Օրինակ, Այգեձորի Թխկուտ տեղամասի պղնձամոլիբդենային հանքավայրում, ըստ նախագծի, կա 13,48 մլն տոննա հանքաքար, որի հանման ընթացքում առաջանալու է 276 մլն տոննա դատարկ ապար: Մեր մոտավոր հաշվարկներով, միայն առաջանալիք պոչանքի եւ նշված դատարկ ապարների համար շահագործողը պետք է 4,9 մլրդ դոլար հարկ վճարի, երբ պղնձի եւ մոլիբդենի 75 տոկոսով կորզման դեպքում եկամուտը կկազմի մոտ 200 մլն դոլար, այսինքն՝ միայն երկու թափոնների հարկումը մոտ 49 անգամ ավելի շատ գումար է կազմում, քան հանքաքարի վերամշակումից առաջացած եկամուտը: Սրան պետք է ավելացնել հողին, ջրին, բուսական ու կենդանական աշխարհին հասցվելիք վնասը, հանքավայրի ուսումնասիրության ընթացքում կատարված ծախսերը եւ այլն, ինչն ավելի կմեծացնի վնասների ծավալը: ՀՀ-ում հանք շահագործողներն ազատված են նշված եւ մի շարք այլ հարկերից եւ մեծ շահույթ են ստանում... Ահա թե ինչու Խորհրդային Միության օրոք**

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 8

*Պետական եկամուտներ*

# ՌՈՒԲԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ. «Մեր նպատակը կառուցողական երկխոսության ճանապարհով հարկերի ինքնուրույն վճարման մշակույթի ամրապնդումն է»



ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ՆՈՒԲԱՐ ԴԱՎԹՅԱՆԻ

**ԱՅՑԵՔԱՐՏ**

**Ռուբեն Գեւորգյան.** ծնվել է 1956թ. Երեւանում: Ավարտել է Երեւանի N127 միջն. դպրոցը: 1975թ. ընդունվել է ԵՊՀ տնտեսագիտական ֆակուլտետ, 1979թ. ավարտել Երեւանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը՝ ստանալով տնտեսագետի որակավորում: 1979թ. աշխատանքի է անցել ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական ապարատում, աշխատել մինչեւ 1991թ.: 1979-1981թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1991 թվականից աշխատում է ՀՀ հարկային համակարգում՝ հարկային տեսուչ, ավագ հարկային տեսուչ, գլխավոր հարկային տեսուչ, այնուհետեւ՝ բաժնի պետ, վարչության պետի տեղակալ: 2010-2013թթ. աշխատել է Արտաշատի տարածքային հարկային տեսչության պետ, իսկ 2013թ. հունվարից նշանակվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Կապանի տարածքային հարկային տեսչության պետ: ՀՀ հարկային ծառայության առաջին դասի ավագ խորհրդական է:
Ամուսնացած է, ունի երեք զավակ:

**Կապանի տարածքային հարկային տեսչությունում հաշվառված հարկ վճարողներից գործունեություն է իրականացնում 2057-ը: Հաշվառված հարկ վճարողներից 2195-ը կնքել է պայմանագիր էլեկտրոնային եղանակով հաշվետվություններ ներկայացնելու համար: Հարկային տեսչությունում հաշվետվությունների ներկայացման ժամանակաշրջանում այլեւս հերթեր չեն գոյանում, եւ հարկ վճարողները ստիպված չեն լինում անցնել տարբեր աշխատասենյակներով: Տեխնոլոգիաների ներդրումը հարկային ոլորտում այժմ նոր հնարավորություններ ու աշխատանք է ենթադրում այս կառույցի համար: Կապանի ՏՀՏ պետ Ռուբեն Գեւորգյանն իր զրույցում շեշտում է, որ համակարգում հիմա առավել կարեւորվում եւ տեղ է տրվում վերլուծական աշխատանքին, ինչի արդյունքում նաեւ նվազել է ստուգումների քանակը:**

**– Պարո՛ն Գեւորգյան, որո՞նք են հարկային մարմինների 2014թ. աշխատանքային առաջնահերթությունները:**

– ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գագիկ Խաչատրյանն ամեն ֆինանսական տարվա սկզբում ուղերձով դիմում է համակարգի աշխատողներին, որտեղ նշում է տարվա մարտահրավերները: Ելնելով այս տարվա ուղերձի տրամաբանությունից՝ ասեմ, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի համար 2014-ը հայտարարվում է ռիսկերի կառավարման վրա հիմնված հարկային եւ մաքսային վարչարարության արդյունավետության բարձրացման տարի, հարկ վճարողների ինքնահայտարարագրման ամրապնդման տարի, որն ուղեկցվելու է ստվերի դեմ պայքարի գործուն մեխանիզմների կիրառմամբ, նաեւ՝ վերլուծական կարողությունների հզորացման, Մաքսային միությանն անդամակցության հետ կապված անհրաժեշտ բարեփոխումների

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 5

# Թե ինչ է լինում հետո, երբ «հայրենասիրություն» բառը դարձնում են ծամոն եւ շիրմա

**Խոսք եւ գործ**

**Ս.թ. ապրիլի 10-ին տեղի ունեցավ «Դանդի փրիշս մեթալս Կապան» ընկերության գլխավոր տնօրեն Հրաչ Ջաբրայանի հանդիպումը մարզկենտրոնի լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ: Ընկերության տեղեկատվական կենտրոնում կազմակերպված հանդիպմանը մասնակցում էին նաեւ «Սյունյաց երկրի» լրագրողները: Եռամսյակը մեկ կազմակերպվող նմանատիպ հանդիպումն այս անգամ, սակայն, դուրս եկավ ավանդական հունից: «Սյունյաց երկրի» խմբագիր Սամվել Ալեքսանյանը Հրաչ Ջաբրայանին ուղղեց մարզկենտրոնի հանրությանը մտահոգող բազմաթիվ հարցերից մի քանիսը, որոնք, մեծամասամբ, մնացին անպատասխան:**
**Սամվել Ալեքսանյանի հարցերն ու Հրաչ Ջաբրայանի պատասխանները՝ ստորեւ:**

**– Պարո՛ն Ջաբրայան, Դուք բավականին գումար՝ մոտ 200 մլն դրամ եք ուզում ներդնել (եւ արդեն սկսել եք ներդնել) Կապանի նախադպրոցական հաստատությունների վերանորոգման համար, ինչը, անշուշտ, դրվատելի է: Բայց նախադպրոցական հաստատություններից մեզ ահազանգում են, որ նորոգումներն իրականացվում են թերություններով, խոտանով ու հավելագրումներով: Հետաքրքիր է՝ ո՞ր շինարարական կազմակերպությունն է այդ աշխատանքներն իրականացնում, ո՞վ է շինարարական կազմակերպության հիմնադիրը (սեփականատերը), ղեկավարը: Ե՞րբ եւ ի՞նչ մրցույթի արդյունքում է շինկազմակերպությունը ստացել Կապանի մանկապարտեզները վերանորոգելու իրավունքը:**

– Նախ՝ ասում եք 200 մլն դրամ, քիչ եք ասում, դրանից ավելի գումար ենք ներդնելու մեր քաղաքի նախադպրոցական հիմնարկներում: Նախկինում մանկապարտեզների վերանորոգումը կամ շինարարությունն անում էր ինքը՝ մանկապարտեզը կամ քաղաքապետարանը: Այսինքն՝ մեզ ներկայացնում էին հաշվարկ, մենք այդ հաշվարկի հիման վրա փոխանցում էինք գումար, որ աշխատանքներն իրենք անեն: Ժամանակի ընթացքում նկատեցինք, որ աշխատանքներն անում են ոչ այն որակով, որ կուզեի տեսնել: Մենք տեսանք, որ աշխատանքներն արվում են, բայց որակը լավ չէ կամ լավ չէ օգտագործված շինանյութերի որակը կամ փողը ճիշտ ձեւով չի ծախսվում, ինչպես որ պիտի ծախսվեր: Եվ իմ հանձնարարությամբ կազմվեց շինարարական խումբ, որում ընդգրկվեցին մի քանի անգործ մարդիկ՝ մասնագիտությամբ շինարար: Իմ որոշմամբ, իմ հրամանով այդ խումբը կազմվեց մի անհատի կողմից, ում անունը ճիշտ չեմ համարում հնչեցնել: Բայց ես նրան լավ եմ ճանաչում: Եվ կայացվեց որոշում, որ բոլոր շինարարական գործերը սրանից հետո այդպես կատարվեն, որից հետո ես կկատարեմ անձնական ստուգումներ, ու դրանից հետո միայն փողը կփոխանցվի շինարարական կազմակերպությանը: Եվ որեւէ տենդերի պրոցես չի եղել, որովհետեւ դրանից առաջ, երբ երեք-չորս անգամ փորձեցինք տենդեր անցկացնել, տհաճ երեւույթ ստեղծվեց: Այսինքն՝ եթե երեք-չորս հիմնարկ տենդերին պիտի մասնակցեն, համաձայնում են՝ ինչ գին պիտի տան, եւ բոլորի ներկայացրած գներն իրարից երեք-չորս հազար դրամով են տարբերվում, ու նրանք համաձայնության են գալիս, թե ով պետք է տենդերը շահի՝ պայմանով, որ հետո միասին աշխատեն: Ես տեսա այդ ամենը, ինչն ինձ համար շատ տհաճ

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 4

## Լուրեր

Ապրիլի 10-ին տեղի ունեցավ ՀՀԿ Սյունիքի մարզային կազմակերպության խորհրդի նիստը, որում խորհրդի մի քանի տարվա գործունեության մասին հակիրճ զեկուցումով հանդես եկավ ՀՀԿ մարզային խորհրդի նախագահ Սուրեն Խաչատրյանը: Այնուհետեւ տեղի ունեցավ ընտրություն: ՀՀԿ Սյունիքի մարզային կառույցի խորհրդի նախագահ վերընտրվեց Սուրեն Խաչատրյանը: Տեղակալներ ընտրվեցին Ծաղիկ Վարդանյանը, Վիկտորյա Դավթյանը, Ռուդոլֆ Սարգսյանը: Նախօրեին կայացել էր ՀՀԿ Կապանի շրջանային կազմակերպության խորհրդի նիստը, որը կառույցի ղեկավար ընտրեց Ռոմա Սարգսյանին: Փոխնախագահներն են Ռիտա Դավթյանը, Արարատ Կարապետյանը: Սյունիքի մարզի շրջանային (Գորիս, Մեղրի, Ագարակ, Կապան, Քաջարան, Սիսիան) խորհրդի նիստերում մինչ այդ ընտրվել էին ՀՀԿ 15-րդ համագումարի պատգամավորներ:

Ապրիլի 14-ին «Սյունիքի մարզային գրադարան» ՊՈԱԿ-ի սպասարկման բաժնում մեկնարկեց արդեն ավանդույթ դարձած «Ազգային գրադարանային շաբաթ» ամենամյա ծրագիրը: Այս տարի այն կրում է «Ես կարդում եմ, իսկ դու… » խորագիրը եւ կշարունակվի մինչեւ ապրիլի 22-ը: Համո Սահյանի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ միջոցառման ընթացքում հնչեցին սիրված բանաստեղծի ստեղծագործությունները Կապանի N զորամասի զինվորների մատուցմամբ: «Ազգային գրադարանային շաբաթվա» ընթացքում կանցկացվեն գրական-երաժշտական ցերեկույթներ, կլոր սեղան՝ «Սերնդի վերարտադրության լավագույն ձեւը», «Արժեհամակարգ» (կրթություն, գիտություն, մշակույթ, դաստիարակություն) թեմաներով, կլինի ընթերցանության ժամ՝ «Կարդում են բոլորը» խորագրով եւ շաբաթվա ամփոփում:

Ապրիլի 15-ին Կապանի քաղաքապետարանում տեղի ունեցավ ավագանու հերթական նիստ, որը վարեց քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը: Օրակարգում ընդգրկված էր 14 հարց: Նիստի ընթացքում փոփոխություններ եւ լրացումներ կատարվեցին նախկինում ընդունված մի քանի որոշումներում: Համայնքի սեփականություն հանդիսացող 488 հենասյուն 3 տարով վարձակալության տրամադրվեց «ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ-ին՝ մեկ հենասյան համար ամսական սահմանելով 260 դրամ վարձավճար: Հաստատվեցին համայնքի ղեկավարին կից համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների՝ հանրային խորհուրդ, գեղարվեստական խորհուրդ եւ երիտասարդական խորհուրդ, քանակը, անվանումներն ու ձեւավորման կարգը:

«Շանթ» հեռուստաընկերության հեղինակած «Պրեմիերա» հեռուստանախագծի հաղթողներ ճանաչվեցին Լենա Ղազարյանը, Նարեկ Մակարյանը եւ Սուսաննա Պետրոսյանը: Եզրափակիչ համերգից հետո անցկացված SMS քվեարկության արդյունքում նախագծի հաղթող ճանաչվեց Լենա Ղազարյանի «Փակուղի» երգը (հեղինակ՝ Տիգրան Աքայան), որի համար «Շանթ» հեռուստաընկերությունը կնկարահանի տեսահոլովակ: Տիգրան Աքայանը Կապանից է՝ Արտուր Աքայանի որդին: Շնորհավորում ենք:

# ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ. «Կարծիքը, թե իբր որդեգրել եմ կենսաթոշակառուներից ազատվելու գործելակերպ, չի համապատասխանում իրականությանը»

**Կապանի բնակիչներից «Սյունյաց երկրի» խմբագրությունում ստացված մի շարք հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով զրույց ունեցանք Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանի հետ:**



**– Պարո՛ն Հայրապետյան, նախ՝ ի՞նչ է կատարվում քաղաքի կոմունալ տնտեսությունում: Ձեր պաշտոնավարման սկզբում վերակառուցեցիք այդ ոլորտի կառավարումը, կատարեցիք կադրային փոփոխություններ, բայց... Հիմա, մեր ունեցած տեղեկություններով, այդ ոլորտում տեղ գտած որոշ բացթողումներ հայտնվել են իրավապահ մարմինների ուշադրության կենտրոնում, ոլորտում կրկին կադրային փոփոխություններ են տեղի ունեցել: Կուզենայինք մի փոքր հանգամանալից իմանալ՝ ի՞նչ է կատարվել եւ կատարվում քաղաքի կոմունալ տնտեսությունում:**

– «Կապանի կոմունալ ծառայություն» ՀԲՀ-ն 2013թ. դեկտեմբերի 25-ին ավագանու որոշմամբ վերակազմավորվել է «Կապանի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ի, որի տնօրենն այժմ գտնվում է արձակուրդի մեջ: Նրան փոխարինում է քաղաքապետի օգնական Գարիկ Յավրումյանը: Սյունիքի մարզի ոստիկանության քննչական բաժնում կոմունալ ծառայության որոշ աշխատակիցների նկատմամբ հարուցվել է քրգործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 315 հոդվածի հատկանիշներով: Գործը նախաքննության փուլում է, այդ պատճառով ավելին ասել չեմ կարող:

**– Այդ ոլորտին առնչվող մի հարց եւս. անցած ձմռանը (մասնավորապես 2013թ. դեկտեմբերին) տեղացած առատ ձյունից հետո կոմունալ տնտեսությունը հայտնվեց անօգնական, անկարող վիճակում: Տեւական ժամանակ քաղաքի փողոցների ձյունը չմաքրվեց, իսկ մայթերին ուղղակի անտանելի վիճակ էր... Ինչո՞ւ:**

– Անցած տարվա դեկտեմբերին, ըստ Հիդրոմետ ծառայության տվյալների, Կապանում 3-4 օրվա ընթացքում առատ տեղումների հետեւանքով ձյան շերտի հաստությունը հասել է մինչեւ 45 սմ-ի եւ 20 օր շարունակ արձանագրվել է -5 աստիճանից ցածր ջերմաստիճան՝ ցերեկվա ժամերին, իսկ գիշերն այն հասել է -16-ի: Այդ օրերին կոմունալ ծառայության բոլոր աշխատակիցներն օր ու գիշեր իրականացրել են ճանապարհների ու մայթերի ձյունից մաքրման, այնուհետեւ աղով ու ավազով մշակման աշխատանքներ՝ ներգրավելով ոչ միայն վարձակալած, այլեւ օգնության կարգով որոշ տնտեսվարող սուբյեկտների կողմից տրամադրված տեխնիկական միջոցները: Օգտագործվել է ըստ անհրաժեշտության, նախատեսվածից մի քանի անգամ շատ տեխնիկական աղ եւ խիճ: Այդ աշխատանքների համար չի խնայվել ոչինչ, աշխատակիցներն էլ իրենց գործը կատարել են բարեխղճորեն: Այլ հարց է, թե որքանով է հնարավոր եղել Կապանի համար աննախադեպ այդ ցրտի պայմաններում, ունեցած տեխնիկայով ու հնարավոր մեթոդներով լավ արդյունքի հասնել: Ստեղծված վիճակից դուրս գալու համար հեռախոսով առաջարկվել է քաղաքում տնտեսվարող բոլոր սուբյեկտներին՝ ձյան մաքրման աշխատանքներ իրականացնել իրենց հարակից տարածքներում: Թե ով որքանով է արձագանքել, դա եւս այլ հարց է: Իսկ կոմունալ ծառայությունը նման աշխատանքներ իրականացրել է մինչեւ փետրվարի վերջը՝ ամբողջ քաղաքը մաքրելով սառցի հաստ շերտերից, որի ականատեսները մեր բնակիչներն են եղել:

**– Պարոն քաղաքապետ, վերջին ամիսներին Կապանում ամենաքննարկվող թեման քաղաքապետարանի ենթակա հիմնարկների որոշ ծառայությունների (հաշվապահություն, պահակային ծառայություն) կենտրոնացումն էր, ինչի հետ նույնիսկ ավագանին ոչ միշտ էր համաձայն: Նախ՝ վերջին հաշվով, ի՞նչ ծառայություններ միավորվեցին, ի՞նչ ունեինք եւ հիմա ի՞նչ ունենք (ե՛ւ ֆինանսական, ե՛ւ կադրային առումով): Ի՞նչն էր այդ «բարեփոխման» նպատակը:**

– Անցած տարվա դեկտեմբերի 25-ին համայնքի ավագանու որոշմամբ ստեղծվել է «Կապան քաղաքի հաշվապահական ծառայությունների կենտրոն» ՀՈԱԿ-ը, որտեղ աշխատանքի են ընդունվել համայնքային ենթակայության բոլոր հիմնարկների հաշվապահները: Աշխատողների կրճատումներ չեն եղել, այլ ընդհակառակը, ավելացել է երկու նոր հաստիք: Կենտրոնի ստեղծման նպատակն աշխատանքներն առավել արդյունավետ դարձնելն է: Պահակային ծառայությունում ոչ մի փոփոխություն չի կատարվել:

**– Կադրերի մասին՝ առավել հանգամանալից, եթե կարելի է: Ըստ էության Դուք որդեգրել եք կենսաթոշակառուներից ազատվելու գործելակերպ: Բայց մեզ հիշեցնում են անընդհատ, որ այդ հարցում խտրականություն եք դնում՝ կենսաթոշակառուներից մի մասին ազատում եք, մյուս մասին՝ ոչ: Իսկապե՞ս այդպես է: Ի՞նչ սկզբունքով եք առաջնորդվում, երբ թոշակառուներից մեկին թողնում եք, մյուսին՝ ազատում: Քանի՞ կենսաթոշակառու եք ազատել, քանիսն են մնում քաղաքապետարանում եւ ենթակա հիմնարկներում:**

– Կարծիքը, թե իբր որդեգրել եմ կենսաթոշակառուներից ազատվելու գործելակերպ, չի համապատասխանում իրականությանը: Իմ պաշտոնավարման ընթացքում քաղաքապետարանում եւ համայնքային ենթակայության հիմնարկներում աշխատակիցների աշխատանքից ազատվելու դեպքերը հիմնված են եղել կամ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 109-3, 112 հոդվածների վրա /աշխատողի նախաձեռնությամբ/, կամ 109-9 եւ 110 հոդվածների վրա /կողմերի համաձայնությամբ/, կամ էլ 109-9 եւ 111 հոդվածների վրա /պայմանագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում/:

**– Քանի որ կադրերի հետ տարվող աշխատանք ենք քննարկում, ապա չենք կարող շրջանցել Սիլվա Գրիգորյանի հարցը: Նա քանիցս դիմել է խմբագրություն առ այն, որ իրեն՝ նախադպրոցական հաստատության երկար տարիների աշխատակցին, անարդարացիորեն դուրս են թողել աշխատանքից:**

**Ի՞նչ ավարտ ունեցավ Սիլվա Գրիգորյանի պատմությունը:**

– Թիվ 8 ՆՈՒՀ-ի երաժշտության դաստիարակ Սիլվա Գրիգորյանն իր դիմումի համաձայն ազատվել է աշխատանքից:

**– Վերջին օրերին Կապանի մանկապարտեզներից ահազանգ ենք ստացել առ այն, որ Կապանի կոմբինատի միջոցներով նախակրթարաններում կատարվող վերանորոգման աշխատանքների կատարողական ակտերի եւ փաստացի կատարված աշխատանքների միջեւ էական տարբերություններ կան: Ո՞ր շինարարական կազմակերպությունն է կատարում այդ աշխատանքները, ո՞վ է այդ կազմակերպության հիմնադիր ղեկավարը, ո՞վ եւ ի՞նչ մրցույթով է այդ կազմակերպությունը ստացել Կապանի նախակրթարանները նորոգելու իրավունք: Միաժամանակ՝ 2014 թվականին որքա՞ն աշխատանք է կատարելու կոմբինատը մարզկենտրոնի նախակրթարաններում, եւ արդյոք այդ կազմակերպությունն է կատարելու նախանշված բոլոր աշխատանքները: Ի՞նչ մեխանիզմով է քաղաքապետարանը մասնակցում կատարված աշխատանքների ընդունմանը:**

– Կապանի ՆՈՒՀ-երում «Դանդի փրիշս մեթալս Կապան» ՓԲԸ-ն իրականացնում է նորոգման աշխատանքներ, որոնք վերահսկվում են քաղաքապետարանի քաղաքաշինության բաժնի կողմից: Ենթադրվող աշխատանքների նախահաշիվները կազմում է ընկերությունը, որը հաստատվում է իմ կողմից: Դրանց նախահաշվային եւ գնային արտահայտությունները համապատասխանում են օրենքով սահմանված չափանիշներին: Նաեւ հանձնման-ընդունման աշխատանքները կատարվում են պատշաճ մակարդակով եւ տեղ են գտնում ՆՈՒՀ-երի հաշվեկշիռներում: Աշխատանքներն իրականացնող կապալառու կազմակերպությունն ընտրվում է «Դանդի փրիշս մեթալս Կապան» ընկերության կողմից: Այս տարվա համար նախատեսված ծրագրերը դեռեւս քննարկման փուլում են:

**Հարցազրույցը՝ ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ**

# Օրը շնչում էր Սահյանով

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 1

«Սյունյաց երկիր» թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանն իր ելույթում անդրադարձ կատարեց սահյանագիտության անցած ուղուն, նշելով, որ դրա արմատները շատ ավելի խորն են, քան մինչեւ այժմ ներկայացված է: Մասնավորապես, 1944 թվականի դեկտեմբերի 28-ին Երեւանում հրավիրվում է գրական երեկո, որտեղ զեկուցումով հանդես է եկել Ստեփան Զորյանը՝ ազդարարելով, որ Որոտանի եզերքին ծնունդ է առել մի նոր բանաստեղծ, իսկ դրանից առաջ Սահյանի բանաստեղծությունների մասին դրվատանքով է արտահայտվել Նաիրի Զարյանը: Այս հեղինակների եւ Սահյանի գրական ժառանգության մասին մյուս հոդվածները, վերլուծական խոսքերը մեկտեղված են թերթի հոբելյանական համարում: Բանախոսը նաեւ ներկաների ուշադրությունը հրավիրեց մի հանգամանքի վրա. բանաստեղծի մահվանից հետո հրատարակված ժողովածուներում բավականին շատ են սպրդել վրիպակներ, անճշտություններ, որոնք այսուհետ պիտի բացառվեն:

Բանաստեղծի հոբելյանը նշելու, նրա հիշատակը հարգելու համար երախտագիտության խոսք ասաց պոետի քույրը՝ Պայծառ Սահյանը:

Երգահան Սասուն Պասկեւիչյանը, քաղաքական գործիչ Րաֆֆի Հովհաննիսյանը, Ազգային գրադարանի փոխտնօրեն Ռաֆիկ Ղազարյանը խոսեցին բանաստեղծի հետ իրենց անձնական շփումների մասին, հուշեր պատմեցին:

Հուշ-ցերեկույթի ընթացքում ելույթները, հիշատակի խոսքերն ընդմիջվում էին ասմունքով, երաժշտական կատարումներով, ցուցադրվում էին հատվածներ նրա մասին նկարահանված ֆիլմերից:

Համո Սահյանի 100-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսությունը տեղի ունեցավ ապրիլի 15-ին Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում: Հնչեցին Համո Սահյանի բանաստեղծությունների հիման վրա գրված երգեր, ինչեց նաեւ բանաստեղծի կենդանի արտասանությունը (տեսաֆիլմով), ներկայացվեցին նրա կյանքն ու բանաստեղծական ուղին: Հոբելյանական հանդիսությանը մասնակցում էին հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը,



ՖՈՏՈԼՈՒՐ

15 ապրիլի 2014թ. Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ակադեմիական թատրոնում

Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը, ՀՀ մշակույթի նախարարի պաշտոնակատար Հասմիկ Պողոսյանը, կառավարության անդամներ, ԱԺ պատգամավորներ, գրական եւ գիտական հասարակության ներկայացուցիչներ, պատվիրակություն Համո Սահյանի ծննդավայրից:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**



# Թե ինչ է լինում հետո, երբ «հայրենասիրություն» բառը դարձնում են ծամոն եւ շիրմա

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 2

էր: Եվ ես ստեղծեցի իմ ղեկավարության ներքո գտնվող այդ կազմակերպությունը:

**– Այսինքն դա «Դանդի փրիշս մեթալս Կապանի» ենթակառո՞ւյցն է:**

– Այո, դա մեր կառույցն է:

**– Եվ ո՞վ է այն անձնավորությունը, ում միջոցով ստեղծել եք շինարարական կազմակերպություն, ում միջոցով տնօրինում եք այդ աշխատանքները, բայց նրա անունը չեք ուզում հնչեցնել: Դուք հայտարարել եւ հայտարարում եք, որ թափանցիկ աշխատանքի կողմնակից եք, ինչը նշանակում է, որ չեք պատրաստվում հանրությունից ինչ-որ բաներ թաքցնել, մանավանդ որ մեր հարցադրումն իր մեջ պետական կամ բիզնես գաղտնիք չի պարունակում:**

– Պարո՛ն Ալեքսանյան, կարծում եմ, որ Ձեր հարցումը տեղին չէ, որովհետեւ այդ անձի ով լինելը կարեւոր չէ, մանավանդ որ հատկացված գումարների նպատակային օգտագործումը վերահսկվում է իմ կողմից: Իսկ եթե այդ մարդն ուզում է՝ թող բացահայտվի, բայց ի՞նչ կարեւոր է, թե ով է այդ մարդը:

**– Պարո՛ն Ջաբրայան, շատ կարեւոր է պարզել, թե ով է այդ մարդը: Ի վերջո Կապանի մանկապարտեզների համար մի քանի հարյուր մլն դրամ է ուղղվում, բայց գաղտնի է պահվում այդ գումարները տնօրինող անձնավորության անունը: Այդ ի՞նչ առեղծված է: Մենք ստիպված կլինենք առաջիկայում Ձեզ պաշտոնական հարցում ուղարկել՝ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի հիման վրա: Եթե դարձյալ չպատասխանեք, ապա այդ մարդու անունը կբացահայտենք դատարանի միջոցով:**

**Երկրորդ՝ ուզում ենք բարձրացնել Ձեր ընկերության կողմից ձեռք բերվող կրի հարցում առաջացած արտառոցությունը: Տարիներ շարունակ Ձեր ընկերությունն անհրաժեշտ կիրը ձեռք է բերել Կապանի «Վայբլ» ՍՊԸ-ից, իսկ վերջին ժամանակներս սկսել եք կիրը ձեռք բերել Պարսկաստանից: Եվ Կապանից կիր ձեռք չբերելու պատճառով մոտ 60 մարդ Կապանում կանգնած է աշխատանքը կորցնելու վտանգի առջեւ: Կարո՞ղ եք բացատրել, թե ինչու չեք գնում Կապանում արտադրվող կիրը, այլ գնում եք Պարսկաստանից: Հետաքրքիր է իմանալ պարսկական մատակարար կազմակերպության անվանումը: Հետաքրքիր է իմանալ նաեւ՝ ի՞նչ գներով եք Պարսկաստանից կիր գնում եւ ի՞նչ գներով էիք «Վայբլից» գնում: Խնդրում ենք զուգահեռ անցկացնել նաեւ կապանյան կրի ու պարսկական կրի որակի միջեւ: Եվ, ի վերջո, Ձեզ չի՞ մտահոգում այն կապանցիների ճակատագիրը, ովքեր կզրկվեն աշխատանքից՝ կրի պատվերը կրճատվելու պատճառով: Տարօրինակ է՝ Կապանի հանքարդյունաբերական ձեռնարկությունը նախընտրում է կիրը ձեռք բերել Պարսկաստանի ադրբեջանցիներից եւ ոչ թե Կապանի ձեռնարկությունից:**

– Պարո՛ն Ալեքսանյան, Ձեր հարցումը շատ հետաքրքիր է, բայց Դուք այս պահին ինձ վիրավորում եք, եթե ասում եք՝ Պարսկաստանի ադրբեջանցիներից: Ձեր փոխարեն ես զգույշ կլինեի եւ այդպես չէի ասի:

**– Հայերս ատրպատականցիներին կոչում ենք ադրբեջանցիներ, եւ ուրեմն վիրավորանքի մասին խոսք լինել չի կարող:**

– Նախ ասեմ, որ բիզնեսին առնչվող որոշումները ես պարտավոր չեմ բացահատել որեւէ մեկին: Այս հիմնարկի տնօրենը, «Դանդիի» փոխնախագահը ես եմ: Այսինքն՝ բիզնեսին առնչվող որոշումները կայացնում եմ մեր ներքին պետք եղած կարգապահական եւ կամ դասված օրենքների հիման վրա: Այս պահին ես որոշել եմ կիրը գնել այլ կազմակերպությունից, որովհետեւ ֆինանսական մեծ տարբերություն կա ի շահ մեր հիմնարկի, հսկայական տարբերություն կա նաեւ որակի առումով: Իսկ եթե ասում են, որ այդ հիմնարկում 60 աշխատավոր է կրճատվելու, ապա պետք է ասեմ՝ այդ մեկն ընդհանրապես մեզ հետ կապ չունի, իրենք կիր մատակարարում են հանքարդյունաբերական այլ ընկերությունների եւս: Եվ եթե նրանք միայն մեզ մատակարարելու համար այդքան աշխատավոր են վերցրել, ապա իրենք իրենց հիմնարկի գործը լավ չեն վերահսկում: Այնուհետեւ՝ ինձ ոչ ոք չի ասել, որ այդքան մարդ է կրճատվելու այդ ընկերությունում: Իսկ թե գների ինչպիսի տարբերություն կա՝ դա բիզնեսի գաղտնիք է, որ ես, ճիշտն ասած, չպիտի բացատրեմ:

**– Այո, Դուք բիզնեսի ղեկավար եք, բայց դա Կապանի համար սկզբունքային հարց է… Եվ չեք ուզում բացահայտել: Միգուցե որակի տարբերության մասի՞ն խոսեք:**

– Որակի մեծ տարբերություն կա:

**– Արդյո՞ք դա նշանակում է, որ նախորդ տարիներին Ձեր ընկերությունը մեծ սխալ է թույլ տվել, երբ «Վայբլից» է գնել կիրը: Մի՞թե նախորդ տարիներին կրի որակական տարբերությունը Ձեզ չէր անհանգստացնում:**

– Երբ մենք սկսեցինք թեստավորումներ անել, այսինքն՝ մեր լաբորատորիայում ստուգել, եւ արդյունքներն ի հայտ եկան, մեր որոշումը վերանայեցինք: Նախկին տնօրենների որոշումների մասին բացատրություն տալ չեմ կարող: Այնպես որ՝ ե՛ւ որակի, ե՛ւ գումարի մեծ տարբերություն կա, ու ես պիտի պաշտպանեմ «Դանդիի» շահերը:

**– Եթե խոսքն իսկապես «Դանդիի» շահերի մասին է, ապա մատնանշեք, խնդրեմ, գնի եւ որակի կոնկրետ տարբերությունը:**

– Պարո՛ն Ալեքսանյան, Դուք ինձնից հարցնում եք մեր բիզնեսի գաղտնիքները:

**– Եղավ… Մի հարց եւս: Տեսեք, թե ինչ է կատարվում: Կապանում կա բեռնատար մեքենաների բավականին մեծ ռեսուրս: Բայց Դուք այդ բեռնատարները չեք օգտագործում ընկերության բեռնափոխադրումների համար: Հետաքրքիր է՝ ո՞ւմ (ո՞ր կազմակերպության) միջոցով եք ընկերության բեռները փոխադրում: Ինչպե՞ս հասկանալ՝ Կապանի «Կամազը» կամ «Կրազը» չե՞ն կարող այստեղից խտանյութը հասցնել Երեւան եւ անպայման դրսի մեքենանե՞րը դա պիտի անեն: Ի՞նչ տրամաբանությամբ եք Դուք առաջնորդվում:**

– Գլխավոր տնօրենի պաշտոնը ստանձնելուց հետո տենդեր արեցինք, որին մասնակցեց չորս հիմնարկ, մեկն ընտրվեց: Եվ ընտրվեց այն հիմնարկը, որ նախկինում մեզ տրամադրում էր փոխադրամիջոցներ, եւ շարունակեցինք աշխատել նույն հիմնարկի հետ: Նախեւառաջ ասեմ, որ արտահանումի լիցենզիայի հարց կա: Ձեր ասած կապանյան հիմնարկներն ու բեռնատարները լիցենզիա չունեն, եւ չեն կարող արտահանել այդ խտանյութը: Եվ, ի վերջո, Ձեր նշած փոխադրամիջոցները, վստահեցնում եմ, բավարար չեն՝ խտանյութը վերջնական կետ հասցնելու համար: Այդ պատճառով որոշեցինք մնալ նույն գործընկերոջ հետ, որ տարիներ ի վեր խտանյութը փոխադրում էր դեպի Փոթի: Առաջարկված գինը շատ հարմար է, իրենք անհրաժեշտ լիցենզիան ունեն, ունեն միջազգային նավահանգիստների հետ աշխատելու փորձ:

**– Եվ ո՞ւմ է պատկանում այդ ձեռնարկությունը, որ շահել է մրցույթը, չէ՞ որ մեր պայմաններում պատահական տնտեսվարողը չի կարող հաղթող ճանաչվել այնպիսի մրցույթում, որի առարկան մի քանի մլն դոլար է:**

– Թող Նորայր Աղայանը պատասխանի:

*Նորայր Աղայան.* – Դա միջազգային ընկերություն է, դա տեղական ընկերություն չէ, անունը «Սոֆմար» է, իսկ մնացածի մասին Դուք կարող եք հետաքրքրվել եւ ճշտել:

**– Դուք իսկապե՞ս չեք ճանաչում այն մարդուն, ում հետ միլիոնավոր դոլարի պայմանագիր եք կնքել:**

– Չեմ ճանաչում:

**– Պարո՛ն Ջաբրայան, ի՞նչ նպատակով կրճատեցիք Ձեր ընկերության ավտոհավաքակայանը: Հետաքրքիր է՝ այդ «բարեփոխմամբ» ընկերությունը որքա՞ն շահույթ է ստանում ամսական (եւ արդյո՞ք ստանում է), այդ «բարեփոխմամբ» քանի՞ մարդ աշխատանքից զրկվեց:**

– Չէ, հաստատ ընկերությունը ոչ մի բան չկորցրեց: Ի վերջո մենք հանքարդյունաբերական ընկերություն ենք: Եվ մեր հիմնարկը պետք է կենտրոնանա անվտանգ հանքարդյունաբերության վրա: Ավտոբուսները, որ տեղափոխում էին մեր աշխատողներին, տարիներ ի վեր գործել են նույն ոճով: Մեր վարորդներն այնքան էին հմտացել, որ նույնիսկ ավտոբուսների տակ ավելորդ բաքեր էին տեղադրել, գալիս էին ընկերության տարածքում դիզվառելիք լցնում, տանում քաղաքում վաճառում, մի բան, որ որեւէ տնօրեն չպիտի հանդուրժեր: Այդ ավտոբուսները մենք վաճառեցինք, գնորդը կապանցի է, Կապանի մեջ ստեղծվեց վեց-յոթ աշխատատեղ: Նույն սերվիսը տասը օրվա ընթացքում կարողացանք տրամադրել մեր աշխատավորներին:

**– Արդյո՞ք դա նշանակում է, որ հավաքակայանը վերացնելու պատճառը նաեւ վարորդների գողությունն էր:**

– Դա թողնում եմ Ձեր ենթադրությանը:

**– Բնապահպանության տեսչության պետ Լեւոն Պետրոսյանը չորս տարի առաջ հայտարարեց (նաեւ մեր թերթում), որ Ձեր ընկերությունը մոտ 50 մլն դրամի ծառատունկ է իրականացրել Կապանի մերձակայքում: Անցել է չորս տարի: Կարո՞ղ ենք Ձեր օգնությամբ, միասին, գնալ եւ տեսնել, թե ինչ վիճակում են գտնվում այդ ծառերը:**

– Թող պարոն Վահե Վարդանյանը պատասխանի:

*Վահե Վարդանյան.* – Այդ ծրագիրն արվել է Կապանի անտառտնտեսության հետ համատեղ: Աշխատանքն ընդունել է Կապանի անտառտնտեսությունը: Դուք կարող եք իրենց օգնությամբ ճշտել, թե ինչ վիճակում են այդ ծառերը:

**– Տարեց կապանցիները մեզ պատմում են, որ դարերով Կապանում կողպեք հասկացողություն չի եղել, այսինքն գողության հավանականություն քիչ է եղել: Իսկ ահա Դուք գրեթե բոլոր ասուլիսներում եւ հանդիպումներում ազդարարում եք կոմբինատում տարածված գողության մասին: Ի դեպ, անգամ խորհրդային տարիներին, երկու-երեք պահակի պարագայում, կոմբինատից այդ մասշտաբի գողություններ չէին կատարվում: Ինչպե՞ս եղավ, որ դարեր շարունակ կողպեք չօգտագործող կապանցին ստիպված (ըստ Ձեզ) կոմբինատից անընդհատ գողություն է անում: Ինչո՞ւ եւ ինչպե՞ս միանգամից փոխվեց կապանցու հոգեկերտվածքը: Անվտանգության այդքան աշխատակիցներ եւ տեսախցիկներ լինելով հանդերձ գողություն են անում: Միգուցե պատճառները փնտրեք այնտեղ, որտեղ մինչեւ հիմա չեք փնտրել: Միգուցե պատճառները փնտրեք ներսում: Եվ ինչպե՞ս հասկանալ՝ Դուք ասում եք՝ այս կամ այն գողության հեղինակին գիտեմ, բայց իրավապահներին չեմ ասի:**

– Պարո՛ն Ալեքսանյան, Դուք մեղվի փեթակը խառնում եք Ձեր մատով: Նախեւառաջ մի ենթադրեք, որ գողությունները նոր են սկսվել: Ինքներդ ասացիք, որ «Դանդին» թափանցիկ է աշխատում…

**– Դրա համար էլ նման հարցեր ենք տալիս՝ ակնկալելով անկեղծ պատասխան:**

– Պարոն Ալեքսանյան, ես էլ գիտեմ, դու էլ գիտես, որ գողությունը մարդու մեջ չի առաջանում մի գիշերվա ընթացքում, այլ տարիների ընթացքում: Ես էլ գիտեմ, դու էլ գիտես, որ սովետական ժամանակներում (երբ բոլոր հիմնարկները եղել են պետության հովանու ներքո) մարդիկ հիմնարկից տանում էին, որովհետեւ պետական սեփականություն էր: Այդ մտածելակերպը փոխելը դժվար է: Եթե բացահայտ խոսում ենք այդ հարցերի մասին, ապա չի կարելի ասել, որ այդ երեւույթները նոր են: Բայց եւ այնպես մենք ուզում ենք դաստիարակել մեր ժողովրդին: Ես կուզեմ, որ այս քաղաքը հասնի, ինչպես մարդիկ են

ասում, եվրոպական մակարդակի: Դրան հասնելու համար, նախեւառաջ, պիտի փոխենք հոգեբանություն եւ մտածելակերպ: Այսօրվա դրությամբ սեփականատերը ներդրել է 131 մլն դոլար: Դա սեփականատիրոջ փողն է: Եվ նա է որոշում, թե ինչպես պահպանել այդ ներդրումը: Այս պահին ունենք աշխատակազմ, որ ներառում է բավականին թվով պահակներ՝ այդ ներդրումները պահպանելու համար:

**– Եվ վերջին հարցը: Պարո՛ն Զաքրայան, ի՞նչ պաշտոն է Ձեզ մոտ զբաղեցնում Սասուն Մանուկյանը, ո՞վ է նա: Եթե կարելի է՝ իր աշխատանքային պայմանագիրը ներկայացրեք լրագրողներին, թող մարդիկ ծանոթանան դրան եւ տարատեսակ ենթադրություններ չանեն:**

– Նախեւառաջ ասեմ, որ Սասուն Մանուկյանն իմ լավագույն ընկերներից է, եւ ասեմ, որ դա գաղտնիք չէ: Ես նույնիսկ հանրապետության նախագահի հետ հանդիպման գնալիս ինձ հետ Սասունին եմ տարել, որովհետեւ մարդ արարածն իր կողքին պետք է ունենա վստահելի մարդիկ, որոնց վստահում է հարյուր տոկոսով: Ես ինքս ինձ շրջապատել եմ լավ ընկերներով, լավ տնօրեններով, որոնց վստահում եմ հարյուր տոկոսով, այդ խմբի մեջ տեղ է գրավում նաեւ Սասուն Մանուկյանը:

**– Էլի թող Ձեր ընկերը լինի, բայց դա ոչ մեկին չի հետաքրքրում, մենք այլ հարց ենք տալիս՝ ի՞նչ պաշտոն է զբաղեցնում նա կոմբինատում:**

– Սասունն աշխատում է որպես տնօրենի խորհրդատու ե՛ւ քաղաքական հարցերով, ե՛ւ ներքաղաքական հարցերով:

**– Կրկնում ենք՝ հնարավո՞ր է ծանոթանալ գործատուի եւ նրա միջեւ կնքված աշխատանքային պայմանագրին: Պարզապես զարմանալի է՝ Դուք հայտարարում եք, թե բիզնես միավոր եք եւ քաղաքականությամբ չեք զբաղվում, մի քիչ հետո էլ ասում եք՝ Սասունը խորհրդական է քաղաքական եւ ներքաղաքական հարցերով: Այդ ի՞նչ քաղաքականությամբ եք զբաղվում: Միգուցե տրամադրե՞ք նրա աշխատանքային պայմանագիրը:**

– Հիմնարկի աշխատանքային գաղտնիքները մնում են աշխատանքային գաղտնիքներ:

*Հ.Գ.* Շատ հետաքրքիր զրույց էր. պարոն Զաքրայանն այդպես էլ սպառիչ պատասխան չտվեց մեր հարցերից եւ ոչ մեկին: Ըստ էության թափանցիկ աշխատելու մասին նա ունի միանգամայն այլ պատկերացումներ:

Նշված հանդիպման եւ մեր զրույցի ընթացքում ակնհայտ դարձավ, որ Կապանի համար էական նշանակություն ունեցող, հանրությանը լրջագույնս մտահոգող բազում հարցերում ինքն այնքան էլ կողմնակից չէ հրապարակայնությանը: Բայց դա այնքան էլ կարեւոր չէ: Կարեւորն ու մտահոգողն այն է, որ կոմբինատի ղեկավարության մի շարք քայլեր տարակուսանք են առաջացնում եւ ուղղակիորեն վնասում են Կապանի սոցիալական կացությանը: Առավել մտահոգիչ է, որ ընկերության գլխավոր տնօրենն այդ քայլերն անում է «հայրենասիրություն» բառը տեղիանտեղի օգտագործելով, հայրենասիրության մասին սեփական պատկերացումները շաղ տալով:

Իհարկե, գործող օրենքի սահմաններում հետամուտ կլինենք, որ զրույցի ընթացքում բարձրացված հարցերի սպառիչ պատասխանը ստանանք: Մինչ այդ, սակայն, կուզենայինք, որ պարոն Զաքրայանը «հայրենասիրություն» բառը գործածելիս նախեւառաջ հիշեր՝ հայրենասիրությունն ապրելու եւ գործելու կերպ է եւ ոչ թե...

# ՌՈՒԲԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ. «Մեր նպատակը կառուցողական երկխոսության ճանապարհով հարկերի ինքնուրույն վճարման մշակույթի ամրապնդումն է»

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 2

իրականացման, մաքսային ընթացակարգերի ավտոմատացման տարի:

**– Կառուցվածքային փոփոխություններ եղե՞լ են Ձեր ղեկավարած կառույցում, ի՞նչ տարածք եք այժմ սպասարկում եւ ի՞նչ թվային տվյալներ ունեք 2014-ի առաջին եռամսյակի ամփոփումից:**

– Փոփոխությունն այն էր, որ Մեղրու ՏՀՏ-ն միացավ Կապանի ՏՀՏ-ին, եւ հիմա Կապանի ՏՀՏ-ն սպասարկում է այդ երկու տարածաշրջանը: Որպեսզի ինչ-ինչ հարցերի դեպքում հարկատուները չհասնեն Կապան՝ Ագարակ եւ Քաջարան քաղաքների «Հայփոստ»-ի բաժանմունքներում ունենք նաեւ հարկ վճարողների սպասարկման կետեր:

Նշեմ, որ տեսչությունում հաշվառված հարկ վճարողներից գործունեություն իրականացնողների թիվը 2057 է, որոնցից 573-ը կազմակերպություններ են, իսկ 1484-ը՝ անհատ ձեռնարկատերեր: Գործող հարկ վճարողներից 181-ը ԱԱՀ վճարող է, 1278-ը՝ շրջանառության հարկ վճարող, 292-ը՝ արտոնագրային վճար վճարող, 63-ը՝ հաստատագրված վճար վճարող, 243-ը՝ ՀՈԱԿ, ՊՈԱԿ, ՀԿ:

2014թ. առաջին եռամսյակում Կապանի ՏՀՏ-ն 1309.3 մլն դրամ փաստացի մուտք է ապահովել պետական բյուջե: Նշեմ, որ 2013թ. ունեցել ենք 6517.5 մլն դրամ, իսկ 2012թ.՝ 5513.5 մլն դրամ փաստացի մուտք:

**– Որո՞նք են Կապանի ՏՀՏ սպասարկած տարածքի խոշոր հարկատուները, որոնց հարկերի վճարումը Ձեր տիրույթում չէ:**

– Խոշոր ընկերությունները, որոնց տարեկան իրացման ծավալը գերազանցում է 1 մլրդ դրամը, հաշվառված են խոշոր հարկ վճարողների հարկային տեսչությունում: Դրանք ընտրվում են մի քանի չափանիշներ հաշվի առնելով՝ վճարած հարկեր, աշխատողների թվաքանակ եւ այլն: Մեր կողմից սպասարկվող տարածքում գործունեություն իրականացնող կազմակերպություններից՝ Ագարակի, Քաջարանի եւ Կապանի հանքարդյունաբերական ձեռնարկությունները հաշվառված են խոշոր հարկ վճարողների հարկային տեսչությունում, 2013թ. եւս հինգ կազմակերպության հաշվառումը տեղափոխվել է այնտեղ:

**– Պարո՛ն Գեւորգյան, հարկատուներն այսօր հնարավորություն ունե՞ն ժամանակին եւ պատշաճ կերպով տեղեկանալու հարկային ոլորտի օրենսդրական փոփոխությունների մասին:**

– Իհարկե, դրանք տեղադրվում են մեր պաշտոնական կայքում, դրանց մասին իրազեկվում են ԶԼՄ-ների միջոցով, հրապարակվում են «Պաշտոնական տեղեկագրում»: Այսօր ցանկացած տիպի տեղեկատվություն առավել մատչելի է: Բացի հրապարակումներից, մենք նաեւ սեմինար-խորհրդակցությունների միջոցով իրազեկում ենք հարկ վճարողներին: Հարկային տեսչությունում տեղեկատվական վահանակին տեղադրվում են բոլոր կարեւոր նորությունները ու փոփոխությունները, ու այստեղ այցելուները կարող են ծանոթանալ դրանց:

**– Եվ քանի որ փոփոխություններից խոսեցինք, ի՞նչ է իրենից ներկայացնում մեկ տարի առաջ ուժի մեջ մտած շրջանառության հարկը:**

– 2013-ի հունվարի 1-ից գործում է «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքը: Այն որոշակի ոլորտների համար է, մասնավորապես՝ փոքր բիզնեսի: Շրջանառության հարկ վճարող են համարվում անձինք, որոնց կողմից նախորդ օրացուցային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների եւ մատուցված ծառայությունների (կատարված աշխատանքների) իրացումից հասույթը՝ առանց ԱԱՀ-ի, չի գերազանցել 58,35 մլն դրամը:

Փոքր բիզնեսի կազմակերպման առումով այն հարմար հարկատեսակ է: Հարկ վճարողները հաշվառումը նախկին ձեւով չեն վարում, այլ ավելի պարզեցված ձեւով՝ իրացման ծավալի որոշակի տոկոս վճարում են բյուջե: Իհարկե, կան բացառություններ, երբ այդ նույն ծավալի շրջանառություն ունեցող հարկ վճարողները չեն կարող համարվել շրջանառության հարկ վճարողներ, քանի որ գործունեության որոշ տեսակների եւ որոշակի պայմանների դեպքում կիրառվում են հարկման այլ ռեժիմներ:

**– Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներդրման համակարգը որքանո՞վ է նվազեցրել հարկային մարմին-հարկատու ֆիզիկական շփումները:**

– Ասեմ, որ դրանք կտրուկ նվազել են: Տեսչությունում հարկ վճարողների կողմից ներկայացված հաշվետվությունները, հաշվարկներն ընդունվում են ինչպես էլեկտրոնային, այնպես էլ թղթային տարբերակով: Հետագայում բացառապես կանցնենք էլեկտրոնային տարբերակին: Իհարկե, իսպառ չենք բացառում շփումները: Հարկ վճարողները պարզաբանումներ ստանալու նպատակով կարող են այցելել տեսչություն: Նշածս թվերից էլ երեւում է, որ այժմ մեզ մոտ հաշվետվությունների մեծ մասը ներկայացվում է էլեկտրոնային եղանակով:

**– Յուրաքանչյուր տեխնիկական նորամուծություն նվազեցնում է մարդկային գործոնը, էլեկտրոնային համակարգի գործարկումից հետո աշխատողների կրճատում եղե՞լ է:**

– Կրճատում չի եղել, որոշակի վերադասավորումներ եղան: 2014թ. մարտ ամսին լուծարվեց Մեղրու տարածքային բաժինը, իսկ Կապանի ՏՀՏ-ում ստեղծվեց նոր՝ հարկ վճարողների սպասարկման բաժին:

**– Ստուգումների պրակտիկան այսօր ինչպիսի՞ն է:**

– Մեր օրենսդրությունը քայլառքայլ փոխվում է դեպի այն, որ գործարարն ազատ գործի, ու հարկային տեսչությունն անհարկի չմիջամտի նրա գործերին: Այսօր մեզ մոտ ստուգումների քանակը բավականին նվազել է: Գործընթացը հետեւյալն է. վերլուծությունների արդյունքում վեր են հանվում ռիսկային կազմակերպությունները: Այն հարկ վճարողները, որոնք իրենց գործունեության մեջ ունեն որոշակի ռիսկեր կամ խնդիրներ, իրազեկվում են՝ հնարավորություն ունենալով շտկելու դրանք: Կարող են արձագանքել իրազեկմանը եւ համապատասխան քայլեր ձեռնարկել, կարող են չարձագանքել: Գործում է ծանուցումների եռաստիճան համակարգ: Եվ երրորդ ծանուցումից հետո միայն, եթե հարկ վճարողի կողմից արձագանք չի լինում, դասվում է ռիսկային հարկ վճարողների շարքին եւ հետագայում ենթակա է ստուգման: Այս մեթոդիկան կիրառելու արդյունքում ստուգումները բավականին նվազել են: Ի վերջո, հնարավոր է, որ հարկ վճարողը պարզապես ուշադիր չի եղել, ու իրազեկումը հնարավորություն է տալիս, որ ուղղի իր թույլ տված սխալը: Հարկային տեսչության նպատակը ստուգելն ու պատժելը չէ, այլ հնարավորություն տալը հարկ վճարողին՝ շտկելու իր թերացումները եւ բացթողումները:

**– Ձեր ամփոփագրերի եւ վերլուծությունների արդյունքում տիրապետում եք սպասարկվող տարածքի տնտեսական վիճակին. կարո՞ղ եք ասել, թե այժմ այս տարածաշրջանում ինչպիսին է փոքր եւ միջին բիզնեսի վիճակը, այն զարգացո՞ւմ, թե՞ նահանջ է գրանցում:**

– Այստեղ այդ հարցում որոշիչ, վճռորոշ դեր ունի «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ-ն: Նրան տարբեր ծառայություններ մատուցող մի շարք կազմակերպություններ հաշվառված են Կապանի ՏՀՏ-ում: Այդ ձեռնարկություններն աշխատում են անմիջականորեն «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ-ի պատվերով, եւ նրանց կարգավիճակը պայմանավորված է կոմբինատի ֆինանսական դրությամբ: Որպես հետեւանք աշխուժանում է առեւտրի եւ սպասարկման ոլորտը: Եվ սա մի փոխկապակցված կուռ շղթա է: Նախորդ տարվա 4-րդ եռամսյակից սկսած՝ զգում ենք, որ «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ-ն սահմանափակել է պատվերները, նրա ենթակառուցվածքների կողմից իրականացվող աշխատանքների ծավալները բավականին նվազել են, ու, բնականաբար, դրա «արձագանքը» տեսանելի է այլ ոլորտներում եւս: Այս տարածաշրջանում հանքարդյունաբերությունը գերակա ճյուղ է, եւ դրա հետ անուղղակի եւ ուղղակի կապ ունեն բոլոր ոլորտները:

**– Իսկ պետբյուջեի հանդեպ ի՞նչ հարկային պարտավորություններ ունի այսօր գյուղացին:**

– Գյուղացին միայն հողի հարկ եւ գույքահարկ է վճարում համայնքային բյուջե: Ազատ է իր կողմից արտադրած մթերքն իրացնելու հարցում եւ որեւէ խնդիր չունի հարկային տեսչության հետ:

**– Դուք նաեւ կազմակերպությունների աշխատողների թվաքանակից եք տեղյակ. ի՞նչ են ցույց տալիս ներկա միտումները՝ նվազո՞ւմ, թե՞ ավելանում է զբաղված անձանց թիվը:**

– Ասեմ, որ աշխատողների թվաքանակն ավելացել է, բայց այդ ավելացումը համարել գործազրկության նվազում եւ զբաղված անձանց ավելացում՝ այնքան էլ ճիշտ չի լինի: Դա նաեւ արդյունք է այն բանի, որ կարեւորում ենք ստվերի դեմ պայքարը, եւ դրանում ունենք որոշակի հաջողություն: Եթե իրական զբաղվածներին բացահայտելուց հետո նրանց գրանցում են որպես աշխատող, կամ եթե օրենսդրական դաշտն այսօր այնպիսին է, որ աշխատողը շահագրգռված է եւ ստիպում է գործատուին իրեն գրանցել որպես աշխատող, դա բերում է աշխատողների թվի ավելացման: Այնպես որ, դա նաեւ վարչարարության արդյունք է, եւ լուրջ վերլուծության կարիք կա իրական պատկերը պարզելու համար: Ավելացել է նաեւ միջին աշխատավարձը, բայց էլի հակված եմ նույն կերպ մտածել. հարց է՝ իրականում մարդկանց կենսամակարդակը բարելավվե՞լ է, թե՞ վարչարարության եւ ստվերի դեմ պայքարի արդյունքում իրական աշխատավարձն են ցույց տալիս:

**– Իսկ վերադասը, ՏՀՏ-ների աշխատանքը գնահատելիս, ի՞նչ չափանիշներ է հաշվի առնում:**

– Տարբեր չափորոշիչներ կան. ՏՀՏ-ին ամենամսյա ծրագրային առաջադրանք է տրվում, եւ դրա կատարումը շատ կարեւոր ցուցանիշ է աշխատանքի գնահատման համար: Մեկ այլ կարեւոր չափորոշիչ է գերավճարների նվազեցման ցուցանիշը, այսինքն՝ գերավճարներ ունենալն առհասարակ բացասական երեւույթ է համարվում: Ապառքների կրճատումը եւս կարեւոր ցուցանիշ է: Նշեմ, որ Կապանի ՏՀՏ-ում ապառքների մասով, չասեմ փայլուն, բայց բավականին շահեկան վիճակում ենք: Ըմհիջիայլոց, Կապանում գրանցված հարկ վճարողները բավականին քաղաքակիրթ եւ օրինապահ են, ու շատ հաճելի է աշխատել այն միջավայրում, որտեղ մարդիկ հարգում են օրենքը:

**– Ի՞նչ գնահատական կտաք Ձեր աշխատողների պատրաստվածությանը, համալրվա՞ծ եք արհեստավարժ կադրերով:**

– Մեր աշխատակազմը բավականին պատրաստված է, չնայած բոլոր կոլեկտիվներում էլ կան խնդիրներ, եւ բոլորն էլ կուզենային ավելի կատարյալ թիմ ունենալ: Դժգոհ չեմ: Մեր աշխատակիցները գիտակցում են, որ շատ լուրջ աշխատանք են կատարում: Հարկերի ժամանակին և ճիշտ վճարմամբ լուծվում են համապետական հարցեր:

**– Պարո՛ն Գեւորգյան, իսկ վերեւներում, երբ հարկային ոլորտում օրենսդրական փոփոխություններ են կատարում, Ձեր ձայնը լսո՞ւմ են, դրանք քննարկո՞ւմ են հարկային տեսչությունների աշխատակիցների հետ:**

– Իհարկե, առաջարկներ ենք ներկայացնում, շատ օրենսդրական փաթեթների քննարկմանն ենք մասնակցել, մեր կարծիքը հայտնել: Պետական եկամուտների կոմիտեում հիմա գործում է նաեւ «կլոր սեղան», որի շուրջ քննարկվում են տեղերից բարձրացված հարցերը եւ օրենսդրական նախագծերը:

**– Եվ վերջում՝ հարկային-հարկատու հարաբերություններն այժմ ի՞նչ որակի հանգրվան են հասել:**

– Մենք հիմա փորձում ենք ավելի քիչ շփումներ ունենալ հարկ վճարողների հետ, շեշտադրումն այժմ վերլուծական աշխատանքների վրա է, որը հարկ վճարողին տեսանելի չէ: Եթե հարկատուն հարկային խնդիրներ չունի, նորմալ կատարում է իր պարտավորությունները, ապա իր համար հանգիստ աշխատում է՝ առանց զգալու ավելորդ լարվածություն: Այսինքն՝ վերլուծական աշխատանքը մեր առաջնային ուղղություններից է: ՊԵԿ-ում գործում է նաեւ «Թեժ գիծ», որից օգտվում եւ իրենց բողոքներն են հայտնում հարկային համակարգից դժգոհություն ունեցողները:

**ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ**

# Միտված մասնագիտական կողմնորոշմանը

**Այդպիսի աշխուժություն Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (պոլիտեխնիկ) Կապանի մասնաճյուղում ընդունելության քննությունների օրերին է լինում: Բայց ապրիլի 8-ին կրթօջախում կազմակերպված միջոցառումն ընդամենը նախերգանքն էր ընդունելության քննությունների: Կրթօջախի փնօրինության նախաձեռնությամբ կազմակերպվել էր բաց դռների օր: Մասնաճյուղ էին այցելել Մեղրու եւ Կապանի փարածաշրջանների դպրոցների բարձր դասարանցիները, որոնց ներկայացվեցին մասնաճյուղում դասավանդվող մասնագիփությունները, դրանք դասավանդող պրոֆեսորադասախոսական կազմը:**



Լեռնիկ Պեփրոսյան
ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի փնօրեն

**«Կուզեի ծանոթանաք մեր մասնաճյուղի առօրյային՝ ի՞նչ ենք ուսուցանում, ինչպե՞ս ենք ուսուցանում, ի՞նչ մասնագիտություններ ենք դասավանդում, հեռանկարում ի՞նչ մասնագիտություններ ենք նախատեսում ներդնել, որից հետո Ձեզ կուղեկցեն մեր մասնաճյուղի տարբեր մասնաշենքերում գտնվող մասնագիտական լսարաններ, լաբորատորիաներ»,** – ներկաներին այսպես դիմեց մասնաճյուղի տնօրեն, մանկավարժական գիտությունների դոկտոր Լեռնիկ Պետրոսյանը եւ հավելեց, որ մասնաճյուղում ուսուցմանը զուգընթաց կազմակերպվում է լիարժեք արտադրական պրակտիկա, իսկ բուհն ավարտելուց հետո նրա շրջանավարտներն աշխատում են մարզի լեռնահանքային ձեռնարկություններում:

Մասնաճյուղի տնօրենը նաեւ ներկայացրեց կրթօջախի ակունքները, որոնք տանում են դեպի 1984թ., երբ Երեւանի Կարլ Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի հիմքի վրա Կապանում ստեղծվեց ուսումնախորհրդատվական կենտրոն, որը 1996թ. վերածվեց կրթահամալիրի, իսկ մեկուկես տարի հետո՝ մայր բուհի մասնաճյուղի: Իսկ այժմ արդեն մասնաճյուղում գործում է վեց մասնագիտություն առկա ուսուցմամբ եւ չորսը՝ հեռակա: Հընթացս մասնաճյուղի տնօրենը նշեց, որ սեպտեմբերի 1-ից մասնաճյուղում ընդունելություն կկատարվի փոխադրումների եւ ճանապարհային երթեւեկության կազմակերպում մասնագիտացմամբ, ինչպես նաեւ տեղեկատվական տեխնոլոգիաներ մասնագիտացումը կներդրվի հեռակա ուսուցման համակարգում: Ի լրումն այս ամենի՝ մասնաճյուղի տնօրենը հայտնեց, որ կրթօջախում կստեղծվի լեռնահանքային արդյունաբերության գծով հզոր լաբորատորիա, որտեղ ժամանակակից սարքավորումներ են տեղադրվելու:

Հանդիպմանը մասնակցում էին կրթօջախի շրջանավարտներ, ովքեր աշխատում են մարզի հանքարդյունաբերական ձեռնարկություններում եւ արդեն լուրջ պաշտոններ են զբաղեցնում: Դրանից զատ համատեղությամբ դասավանդում են մասնաճյուղում: Շրջանավարտներից Աննա Փարամազյանը («Դանդի փրիշս մեթալս Կապան» ընկերության հետազոտական լաբորատորիայի վարիչ), Ռուբեն Աբգարյանը («Լեռէքս» ՍՊԸ գլխավոր ճարտարագետ) եւ ուրիշներ պատմեցին իրենց ղեկավարած կառույցների մասին: Մասնաճյուղի ուսանողական առօրյայի մասին ապագա դիմորդներին պատմեցին ներկայիս ուսանողները:

Հանդիպման ավարտից հետո ապագա դիմորդները շրջեցին մասնաճյուղի լսարաններով եւ լաբորատորիաներով, հաղորդակից եղան ուսման պայմաններին, մասնաճյուղի հնարավորություններին:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

# Հովիկ Աբրահամյանը՝

## Հայաստանի Հանրապետության վարչապետ

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 1

**թյան կազմը: Եվ մոտեցումը կլինի կառավարության անդամների այս տարիների ընթացքում կատարած աշխատանքի արդյունքն ու նաեւ այն, թե որքանով ապագայում ի վիճակի կլինեն իրականացնել նոր ծրագրեր»:**




Հովիկ Աբրահամյանը ծնվել է 1958թ. հունվարի 24-ին Արարատի մարզի Մխչյան գյուղում: 2008-11թթ. եւ 2012-14թթ. եղել է ՀՀ չորրորդ եւ հինգերորդ գումարումների Ազգային ժողովի նախագահ:

Ավարտել է Երեւանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը: Ծառայել է խորհրդային բանակում: Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի խորհրդի նախագահն է, նույն բուհի պատվավոր դոկտոր: Հայաստանի Հանրապետական կուսակցության փոխնախագահն է: Պարգեւատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի եւ «Անանիա Շիրակացի» մեդալներով, «Մեսրոպ Մաշտոց» շքանշանով:

Մինչեւ նոր կառավարության ձեւավորումը, սակայն, Հայաստանի ներքաղաքական դաշտում տեղի են ունենում վերադասավորումներ ու հստակեցումներ:

Ապրիլի 17-ին իշխող կոալիցիայից դուրս եկավ ՕԵԿ-ը՝ պատճառաբանելով, որ չի կարողանում իրականացնել իր բազմաթիվ նախընտրական ծրագրերը, իսկ կոալիցիայի ձեւաչափը գործում է ոչ արդյունավետ:

ՀՅԴ-ն իշխանության մաս կազմելու համար յոթ կետից բաղկացած առաջարկություն-ծրագիր է ներկայացրել, որի ամբողջական ընդունումը ՀՀԿ-ի կողմից քիչ հավանական է:

Առայժմ քիչ հավանական է նաեւ ԲՀԿ-ի մասնակցությունը նոր կառավարության ձեւավորմանը: Այդ առիթով ԲՀԿ նախագահի մամուլի խոսնակն ասել է. «Եվս մեկ անգամ վերահաստատում եմ, որ ԲՀԿ-ի օրակարգում քաղաքական կոալիցիա մտնելու հարց դրված չէ. չկա նման ցանկություն»:

# ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի մասնակցությունը REV2014 միջազգային գիտաժողովին

**ՍԵՅՐԱՆ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**
ՀՊՃՀ (Պոլիտեխնիկ) Կապանի մասնաճյուղի փնօրենի գիտական աշխատանքների գծով տեղակալ

Ավելի քան 210 տարի առաջ էդինբուրգի (Շոտլանդիա) Հին ավագ դպրոցի ուսուցիչ Ջեյմս Փիլանսն առաջին անգամ դասի ընթացքում օգտագործեց գրատախտակը՝ տեսանելի դարձնելով ուսուցչի գրածը դասարանի բոլոր աշակերտներին: Ներկայումս արդեն սովորական է դարձել տեղեկատվության արտապատկերման արդիական միջոցների (էլեկտրոնային ինտերակտիվ գրատախտակներ, լազերային պրոյեկտորներ եւ այլն) կիրառումը դպրոցներում, բուհերում եւ այլ կրթական ու գիտահետազոտական հաստատություններում:

Սակայն ուսումնական գործընթացի որակի եւ մատչելիության ապահովման օրավուր աճող պահանջները ստիպում են կրթության կազմակերպման նոր մեթոդաբանական եւ տեխնիկական միջոցների կիրառում: Մասնավորապես, Բոլոնիայի գործընթացի շրջանակներում եվրոպական կրթական միասնական տարածք ապահովելու նպատակով բուհերում ուսանողների կոմպետենցիաների վրա հիմնված ուսանողակենտրոն «Թյունինգյան մեթոդաբանության» կիրառումը պահանջում է ուսումնական գործընթացում բարձրագույն մասնագիտական կրթության կազմակերպման նորագույն միջոցների հրատապ ներդրում: Այդպիսի միջոցներից է հեռավար ճարտարագիտության եւ վիրտուալ գործիքակազմի կիրառման վրա հիմնված ստեղծագործական ճարտարագիտական կրթությունը, որի զարգացմանն է ուղղված Իլմենաուի տեխնոլոգիական համալսարանի (Գերմանիա) համակարգմամբ ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի եւ հինգ եվրոպական բուհի ու տասնհինգ ընկերության մասնակցությամբ իրականացվող 530278-TEMPUS-1-2012-1-DE-TEMPUS-JPHES միջազգային նախագիծը: Ճարտարագիտական կրթության այս հեռանկարային ուղղության զարգացմանն են ուղղված հեռավար ճարտարագիտության եւ վիրտուալ գործիքակազմի ոլորտի աշխարհի խոշորագույն ընկերությունների եւ բուհերի հետազոտությունների արդյունքները, որոնք, սկսած 2004 թվականից, պարբերաբար ներկայացվում են միջազգային հեղինակավոր «Հեռավար ճարտարագիտության եւ վիրտուալ գործիքակազմ (REV)» ամենամյա գիտաժողովում: 2014թ. փետրվարի 26-28-ը Պորտուգալիայի Պորտո քաղաքում տեղի ունեցած REV2014 միջազգային գիտաժողովին մասնակցում էր 40 երկիր ներկայացնող շուրջ 160 գիտնական: Գիտաժողովի ծրագրային կոմիտեի որոշմամբ գիտաժողովին մասնակցելու թույլտվություն էր ստացել նաեւ ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղը, որը Հայաստանի Հայ-ամերիկյան համալսարանի հետ համատեղ ներկայացնում էր Հայաստանի Հանրապետությունը: Մասնաճյուղից ներկայացված «Վիրտուալ օբյեկտի վիճակագրական մոդելի կառուցումը LabVIEW միջավայրում» թեմայով զեկույցը (հեղ. Ս.Բալասանյան, Հ.Գեւորգյան)», որում արտացոլված են «ԶՊՄԿ» ՓԲԸ ֆինանսավորմամբ մասնաճյուղում կատարվող թիվ 01-Գ/2010 գիտահետազոտական նախագծի արդյունքները, նվիրված է տեխնոլոգիական գործընթացների նմանակային մոդելների օգնությամբ վիրտուալ վիճակագրական տվյալների ստացմանը եւ դրանց հիման վրա հետազոտվող գործընթացների ռեգրեսիոն մոդելների կառուցմանը LabVIEW ծրագրային միջավայրում:




Ներկայացված զեկույցը պատշաճ ուշադրության արժանացավ համապատասխան ոլորտի գերմանացի եւ ճապոնացի գիտնականների կողմից, ովքեր առաջարկեցին մշակված վիրտուալ լաբորատորիան լծորդել Կապանի մասնաճյուղում տեղադրվելիք Իլմենաուի համալսարանում ստեղծված REAL հիբրիդային հեռավար լաբորատորիային, ինչի շնորհիվ այն մատչելի կդառնա նաեւ Հայաստանի եւ արտերկրի բուհերի ուսանողների համար:

ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի մասնակցությունը REV2014 միջազգային գիտաժողովին, բացի Հայաստանն արտերկրում ներկայացնելու բարձր առաքելությունից, կարեւորվում է նաեւ նրանով, որ այն առաջին արտասահմանյան գիտական գործուղումն էր մասնաճյուղի պատմության մեջ: Գործուղման ծախսերի 80%-ը ֆինանսավորվել է Տեմպուս նախագծի, մնացյալը՝ մասնաճյուղի արտաբյուջետային միջոցներից:

# Սյունիքը 1-ին աշխարհամարտում. 1914-1918ԹԹ.

1-ԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾ ԵՎ ԱՆՀԵՏ ԿՈՐԱԾ ՍՅՈՒՆԵՑԻՆԵՐԸ /ԸՍՏ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ/

ՍԿԻԶԲԸ՝ N4 (312)

**ԽՈՏ**

| | | |
|---|---|---|
| 20. | Այվազյան Շամիր Եգորի | 1918 |
| 21. | Պետրոսյան Սահակ | 1918 |
| 22. | Սահակյան Համազասպ | 1918 |
| 23. | Հակոբջանյան Ավանես Պողոսի | 1918 |
| 24. | Մանուկյան Մկրտիչ | 1914 |
| 25. | Մարդյան Խաչատուր | 1914 |
| 26. | Մկրտչյան Ավետիս | 1918 |
| 27. | Սիմոնյան Գալուստ Աղալոյի | 1920 |
| 28. | Բաղդասարյան Հարություն Հակոբի | 1920 |
| 29. | Թունյան Առաքել Գասպարի | 1918 |
| 30. | Համբարձումյան Հայրապետ | 1918 |
| 31. | Մինասյան Մակիչ Հակոբի | 1913 |

**ՇԻՆՈՒՀԱՅՐ**

| | | |
|---|---|---|
| 1 | Ծատուրյան Առաքել Մխիթարի | 1920 |
| 2 | Հակոբյան Թեւատրոս | 1919 |
| 3 | Հովակիմյան Արամ Գրիգորի | 1919 |
| 4 | Ղուկասյան Ավետիս | 1918 |
| 5 | Թունյան Արշակ Ավետի | 1920 |
| 6 | Սահակյան Բարսեղ Առաքելի | 1920 |
| 7 | Աղայան Սուքիաս Գրիգորի | 1920 |
| 8 | Աղայան Արսեն Հարությունի | 1920 |
| 9 | Գրիգորյան Բախշի | 1920 |
| 10 | Պետրոսյան Պետրոս Հարություն | 1916 |
| 11 | Հարությունյան Առաքել | 1916 |

**ՅԱՅՋԻ /ՀԱՐԺԻՍ/**

| | | |
|---|---|---|
| 1. | Ավագյան Արշակ Գրիգորի | 1916 |
| 2. | Գրիգորյան Սարգիս Մուսայի | 1916 |
| 3. | Ղուկասյան Թումաս | 1914 |
| 4. | Զաքարյան Բարսեղ Հարությունի | 1914 |
| 5. | Ալավերդյան Մարտիրոս | 1916 |
| 6. | Վարդազարյան Վարդազար Բալայի | 1915 |
| 7. | Վարդազարյան Մաթեւոս | 1915 |
| 8. | Գրիգորյան Հակոբ Օհանի | 1917 |
| 9. | Հովհաննեսյան Խաչատուր Շաքարի | 1914 |
| 10. | Բաղդասարյան Աղաջան | 1914 |
| 11. | Հարությունյան Օհան Սիմոնի | 1917 |
| 12. | Ծատուրյան Մանուց | 1917 |
| 13. | Ղազարյան Ավանես Հովսեփի | 1917 |
| 14. | Խաչատրյան Հայրապետ | 1917 |
| 15. | Սիմոնյան Օհան Հարությունի | 1914 |
| 16. | Ավետիսյան Մաթեւոս Բաղդասարի | 1920 |
| 17. | Սահակյան Սրապիոն Համբարձումի | 1918 |
| 18. | Ղուկասյանմ Վարդան Մաթեւոսի | 1919 |
| 19. | Գասպարյան Բարսեղ Բաբայի | 1920 |
| 20. | Մկրտչյան Բաղդասար | 1920 |
| 21. | Ալավերդյան Ալում Ծատուրի | 1918 |
| 22. | Թունյան Մարտիրոս Դավիդի | 1920 |
| 23. | Ավագյան Մարտիրոս Գրիգորի | 1920 |
| 24. | Մարտիրոսյան Զաքար | 1919 |
| 25. | Մկրտչյան Արմենակ Զավադի | 1920 |
| 26. | Դավթյան Պողոս Ծիրանի | 1920 |
| 27. | Վարդանյան Ավետիս Աղազյուլի | 1920 |
| 28. | Աղաջանյան Պողոս Հայրապետի | 1919 |

**ՔԱՐԱՀՈՒՆՋ**

| | | |
|---|---|---|
| 1. | Բարսեղյան Հարություն | 1920 |
| 2. | Գալստյան Եփրեմ Գրիգորի | 1920 |
| 3. | Հարությունյան Հովհաննես Գրիգորի | 1920 |
| 4. | Ծատուրյան Սահակ | 1920 |
| 5. | Մելքումյան Բեգլար Զաքարի | 1920 |
| 6. | Աբրահամյան Ռուբեն Ռաֆիկի | 1919 |
| 7. | Գեւորգյան Ալեքսան Գալուստի | 1920 |
| 8. | Գեւորգյան Մարտիրոս Աբայի | 1920 |
| 9. | Գորգիսյան Գարեգին | 1920 |
| 10. | Հայրապետյան Եղիա | 1915 |
| 11. | Հախյան Սարի Մարտիրոսի | 1917 |
| 12. | Հակոբյան Իսակ Հայրապետի | 1919 |
| 13. | Հախյան Մարտիրոս | 1917 |
| 14. | Հարությունյան Սահակ | 1917 |
| 15. | Հասրաթյան Դեւոնդ Սահակի | 1919 |

**ԽՆՁՈՐԵՍԿ**

| | | |
|---|---|---|
| 1. | Բաղդասարյան Բախշի Ավագի | 1920 |
| 2. | Դալլաքյան Նիկոլայ Հովհաննեսի | 1916 |
| 3. | Նադանյան Խաչատուր | 1920 |
| 4. | Մաղաքյան Տիգրան | 1920 |
| 5. | Զանունց Աբուլի Մանուչարի | 1920 |
| 6. | Սաֆյան Ներսես Բոզիի | 1921 |
| 7. | Գյուլնազարյան Հարություն | 1920 |
| 8. | Իշխանյան Կարապետ Աղասի | 1917 |
| 9. | Իշխանյան Խաչատուր Հայրապետի | 1916 |
| 10. | Շահնազարյան Զավադ | 1915 |
| 11. | Դրդիլյան Միրզա Ավանեսի | 1916 |
| 12. | Ամայան Միրզա Գրիգորի | 1916 |
| 13. | Առուստամյան Հազարի Սյուքիասի | 1917 |
| 14. | Շահնազարյան Սահակ | 1915 |
| 15. | Գասպարյան Սահակ Կոստանդի | 1916 |
| 16. | Դլեչունց Աղալո Միրզայի | 1917 |
| 17. | Աբրահամյան Հարություն Սարգսի | 1915 |
| 18. | Թելունց Թադեւոս | 1920 |
| 19. | Շահնազարյան Սեւի | 1921 |
| 20. | Ավագյան Ստեփան | 1920 |
| 21. | Թաթարյան Սոնա | 1920 |
| 22. | Ադիխանյան Ներսես | 1921 |
| 23. | Թութխանյան Մխիթար | 1919 |
| 24. | Իքտիբարյան Ասկանդար | 1920 |
| 25. | Հախնազարյան Գրիգոր | 1919 |
| 26. | Գիլանյան Լեւոն Բոզիի | 1919 |
| 27. | Աբաբեկյան Սրապիոն | 1916 |
| 28. | Բուդաղյան Մակիչ Միրզայի | 1919 |
| 29. | Գյուլխանյան Առաքել | 1917 |
| 30. | Շահզադյան Հակոբ Մինասի | 1917 |
| 31. | Գյուլումբարյան Գարեգին | 1916 |
| 32. | Ակունց Առաքել Միրզայի | 1919 |
| 33. | Բրդանունց Հարություն | 1915 |
| 34. | Հունունց Մինաս | 1917 |
| 35. | Թելունց Լեւոն | 1915 |
| 36. | Սարգիսջանյան Վարազդատ | 1920 |
| 37. | Խոյլինյան Մարտիրոս Ալումի | 1919 |
| 38. | Ջուլհակյան Խիկար Մանասի | 1918 |
| 39. | Արզունց Միխայիլ Համբարձումի | 1916 |
| 40. | Ալավերդյան Արամ Բախշիի | 1919 |
| 41. | Գյուզանյան Խաչատուր Ակոյի | 1920 |
| 42. | Ջահավիրյան Դանիել | 1919 |
| 43. | Սիմոնյան Բաբա Ալիշի | 1916 |
| 44. | Արզունց Մակիչ | 1917 |
| 45. | Դադունց Ծատուր | 1918 |
| 46. | Խալափյան Հայկ Սարգսի | 1918 |
| 47. | Աբարանդյան Հայկ Սահակի | 1918 |
| 48. | Խոտունց Աղաջան Իվանի | 1916 |
| 49. | Թոխսունց Բախշի Դավիդի | 1914 |
| 50. | Մարտիրոսյան Հարություն Հակոբի | 1918 |
| 51. | Շահզադյան Կոստանդ Միրզայի | 1916 |
| 52. | Գյուզալյան Գարեգին | 1918 |
| 53. | Գյուզալյան Սմբաթ Բաբայի | 1918 |

**ԱԼԻԴՈՒԼԻ**

| | | |
|---|---|---|
| 1. | Պետրոսյան Եփրեմ Ավանեսի | 1919 |
| 2. | Հարությունյան Խաչատուր Մարտիրոսի | 1915 |
| 3. | Պարոնյան Ավանես Վարդազարի | 1916 |
| 4. | Սարգսյան Վարազդատ Մկրտիչի | 1917 |
| 5. | Սարգսյան Խաչատուր Մկրտիչի | 1918 |
| 6. | Բաղդասարյան Ավանես Պողոսի | 1918 |
| 7. | Բաղդասարյան Մարտիրոս Աղալոյի | 1914 |
| 8. | Սարգսյան Աբգար Պողոսի | 1918 |
| 9. | Ներսեսյան Հարություն Պետրոսի | 1920 |
| 10. | Գրիգորյան Միխայիլ Դավիդի | 1914 |
| 11. | Աղաջանյան Մանգասար Հայրապետի | 1921 |
| 12. | Սարգսյան Խաչատուր | 1918 |
| 13. | Հայրապետյան Ավագ Սիմոնի | 1918 |
| 14. | Ամիրջանյան Կարապետ Առաքելի | 1918 |
| 15. | Պետրոսյան Սողոմոն Հարությունի | 1918 |
| 16. | Ալեքսանյան Վարդազար Հովհաննեսի | 1918 |

**ԿՅՈՐՈՒ**

| | | |
|---|---|---|
| 1. | Հարությունյան Արսեն Արամի | 1918 |
| 2. | Վանյան Մանուչար Հայրապետի | 1918 |
| 3. | Մարդյան Բոզի Հարությունի | 1918 |
| 4. | Մուսայելյան Կոստանդ Համբարձումի | 1918 |

*ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ*

## «ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ» ԹԵՐԹԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Համաձայն «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի՝ ներկայացնում ենք «Սյունյաց երկիր» թերթի («Սյունյաց աշխարհ» ՍՊԸ) 2013թ. ֆինանսական հաշվետվությունը (դրամով):

**Համախառն եկամուտ**...........16,078,444
***Այդ թվում՝***
Նվիրատվություն՝ .....................4,600,000
Սուբսիդիա՝.................................500,000
Գովազդ (առանց ԱԱՀ-ի)՝ .........1,206,000

## ԿԱՊԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ԱԿՆԿԱԼՎՈՂ ԾՐԱԳՐԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՄԱՐ ԹԱՓՈՒՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԻ ՄՐՑՈՒՅԹ

**ՊԱՀԱՆՋՎՈՂ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

- Բարձրագույն կրթություն կառավարման, տնտեսագիտական կամ ֆինանսական ոլորտներում
- Գիտելիքներ ծրագրի կառավարման եւ ֆինանսական գործառույթների վերաբերյալ
- Ծրագրերի կառավարման աշխատանքային փորձ /շինանարարական ծրագրերի կառավարման փորձը ցանկալի է/
- Մեկից ավելի ծրագրերի կառավարման հմտություններ եւ կարողություններ
- Պատրաստակամություն ըստ անհրաժեշտության աշխատել արտաժամյա
- Ստեղծագործական մտածելակերպի եւ կարողությունների դրսեւորում
- Միջանձնային հարաբերությունների կառավարման եւ կոնֆլիկտների հարթեցման կարողություններ եւ հմտություններ

Ելներով ծրագրի ընդհանուր նպատակների իրականացման շահերից արտաքին կապերի հաստատման եւ համագործակցության ցանցի ստեղծման եւ համակարգման կարողություններ.

Դիմելու համար ուղարկեք Ձեր ինքնակենսագրականը **vardanelyazyan@gmail.com** էլեկտրոնային հասցեին՝ նշելով թափուր պաշտոնի անվանումը կամ այցելեք Կապանի Տարածքային զարգացման գրասենյակ:

Դիմումները ընդունվում են մինչեւ ապրիլի 27-ը:



Գավաթի խաղարկությունում աչքի ընկած մարզիկներ (ձախից՝ աջ) Ռազմիկ Մանուչարյանը, Շանթ Դավթյանը եւ Էրիկ Մուսայելյանը

# Ակումբը հաստատում է իր բարձր կարգը

**Մարզական**

Երեւանում ապրիլի 11-ից 13-ը անցկացվեց ՀՀ ոստիկանության պետի գավաթի խաղարկությունը՝ քիքբոքսինգից, որին մասնակցեց չորս երկրի՝ Հայաստանի, Ռուսաստանի Դաշնության, Վրաստանի, Իրանի 300-ից ավելի մարզիկ: Կապանի քիք-բոքսինգի «Գարեգին Նժդեհ» ակումբը (մարզիչ, ՀՀ վաստակավոր մարզիչ՝ Արային Սարգսյան) մրցմանը մասնակցեց ինը մարզիկով: Չնայած մրցափորձի որոշակի պակասին (երեքամյա ընդմիջումից հետո մեկ տարի է, ինչ ակումբը վերսկսել է գործունեությունը), կապանցի մարզիկները հաջող հանդես եկան՝ նվաճելով ութ մեդալ, իսկ նրանցից երեքը՝ Վաղարշակ Բադալյանը (7-9 տարեկանների մեջ, 22կգ քաշային կարգ), 16-17 տարեկանների մեջ Շանթ Դավթյանը (49կգ քաշային կարգ), Էրիկ Մուսայելյանը (54կգ քաշային կարգ) կանգնեցին պատվո պատվանդանի վերին հարթակին: Տպավորիչ էր կիսաեզրափակչում Վլադիմիր Հովհաննիսյանի (54կգ) հաղթանակը, ով յոթ վայրկյանում նոկաուտի ենթարկեց մրցակցին: Շանթ Դավթյանը եզրափակչում նույնպես հաղթանակի հասավ նոկաուտով:

ՀՀ ոստիկանապետի գավաթի այս խաղարկության մասնակցությունը հնարավոր դարձավ Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանի եւ Սյունիքի գյուղապետ Սամվել Սարգսյանի հովանավորության շնորհիվ, ովքեր արժանացան «Դինամո» մարզական ընկերության (նախագահ՝ ՀՀ ոստիկանապետ, գեներալ-լեյտենանտ Վլադիմիր Գասպարյան) դիպլոմին: Ի դեպ, «Գարեգին Նժդեհ» ակումբի սաներին նոր փորձություն է սպասվում. մայիսի 12-18-ը Աթենքում (Հունաստան) կկայանա մրցաձեւի աշխարհի առաջնությունը, որին մասնակցել հնարավոր կլինի (ակումբին երեք տեղ է հատկացված) հովանավորների օժանդակության շնորհիվ: «Գարեգին Նժդեհ» ակումբի մարզիչն ու սաները լիահույս են, որ այս անգամ եւս կգտնվեն սրտացավ մարդիկ:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

**ԿՈՐԵԼ Է** Բորիս Վաղարշակի Սիմոնյանի «ZAZ -968» մակնիշի ավտոմեքենայի 53 SL 738 պետհամարանիշը եւ տեխնիկական անձնագիրը: Համարել անվավեր:

# Մեղրին վերածվում է մեռյալ գոտու

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 1

**ընդամենը մի քանի մետաղական հանքավայրեր ունեցող մեր հանրապետությունում հանկարծ մեծ քանակությամբ հանքեր հայտնվեցին: Հայաստանի իշխանությունները, միջազգային կազմակերպությունների հետ միասին, մեր երկրի օրենքները համապատասխանեցրել են «Կայուն զարգացում» հայեցակարգի դրույթներին, եւ այդ օրենք կոչվածներով հանքարդյունաբերությամբ զբաղվողներն ազատվում են հիմնական հարկերը վճարելուց: Արդյունքում՝ հանքատերերը մեծ հարստություններ են դիզում, կողոպտվում են մեր բնական պաշարները, թունավորվում եւ ոչնչացվում են հողն ու ջուրը, ընդհանրապես՝ բնությունը: Դժբախտաբար, հայ ժողովուրդը դեռեւս չի գիտակցում, որ բնական միջավայրի աղտոտման-թունավորման եղանակով իրականացվող գենոցիդն անհամեմատ ավելի ողբերգական հետեւանքներով է հղի, քան հարյուր տարի առաջ իրականացվածը: Այն ժամանակ սպանում էին հային, իսկ մեր օրերում սպանում են հայի ապրելու հենարանը՝ բնությունը: Այսինքն՝ Հայաստանի Հանրապետության իշխանավորներն ու միջազգային հեղինակավոր կազմակերպությունները բացահայտորեն ցեղասպանություն են իրականացնում»,** - ասում է Հ. Սանասարյանը:

Նրա գնահատմամբ՝ եթե Մեղրիում այդ հանքավայրերը շահագործվեն, ապա տարածաշրջանը՝ Մեղրի գետով հանդերձ, պետք է որպես օգտագործելի տարածք հանվի ՀՀ տնտեսական նշանակության տարածքներից. **«Այստեղ խաբկանքի տեղ չէ, որ ասենք, թե հանքերի շահագործման հետ միաժամանակ կամ դրանից հետո կարող ենք Մեղրու քաղցրահամ մրգեր աճեցնել, որ մարդիկ կարող են այդ գյուղերում ու քաղաքում ապրել: Այդպես չէ, եթե այդ հանքերը շահագործվեն (արդեն մի քանիսը սկսել են), առաջինը շարքից դուրս է գալու՝ թունավորվելու է Մեղրի գետը, այդ տարածաշրջանի ոռոգման ջրի միակ աղբյուրը: Ընդ որում, թեեւ Մեղրի գետի հովտում դեռեւս շատ քիչ մետաղական հանքեր եւ փոքր ծավալներով են շահագործվում, բայց գետում արդեն անգամ գորտ ու որդ չկա: Եթե հիմա խոսում ենք տարեկան մոտ հարյուրավոր տոննա հանքանյութի վերամշակման մասին, ապա, ըստ տրված արտոնագրերի, մոտակա տարիներին այդ թիվը կարող է հասնել միլիոնների: Այսօր տեխնիկան շատ է հզորացել, մի շերեփը գցում են, 20-25 տոննա հանքաքար են հանում, 1 մեքենան մինչեւ 120 տոննա հանքաքար է տեղափոխում: Նաեւ պետք է նկատի ունենալ, որ այս տարածաշրջանի հանքերում առկա է նաեւ ցրված ուրանը, որը չի կորզվելու եւ շրջակա միջավայր է թափվելու պոչանքի ու մյուս թափոնների հետ: Հանքերի ծավալուն շահագործման դեպքում Մեղրին արդեն կդառնա մեռյալ գոտի: Նաեւ պետք է ասեմ, որ այդ հանքավայրերը հայտնաբերված են խորհրդային իշխանության օրոք, սակայն դրանց շահագործման մասին խոսք չկար, քանզի դրանց շահագործումը կնշանակեր՝ ոչնչացնել սեփական երկիրը: Մեղրի գետում 6 տեսակի ձուկ կար, բայց երկրաբանական ծավալուն ուսումնասիրությունների հետեւանքով մի ձկնատեսակը վերացավ 1980-ականի սկզբներին, իսկ ներկայումս 2 հանքի չնչին ծավալներով շահագործման պայմաններում Մեղրի գետում կենդանական աշխարհը վերացել է: Մեղրու ձկնորսները պատմում են, որ նախքան հանքարդյունաբերության առաջին քայլերը, յուրաքանչյուր ձկնորս կարթով օրական 10-12կգ ձուկ էր բռնում, եւ ամենաքիչն օրական 300 կգ ձուկ էին որսում, այժմ այդ հարստությունը զրոյացել է: Եթե արտոնագիր ստացած հանքերի**



Հակոբ Սանասարյան,

**միայն մի մասի շահագործումն իրականանա, ապա Մեղրի գետը կնմանվի Կարճեւան գետակին (Արաքսի վտակներից), որն ամբողջությամբ հոսող պոչանք է՝ Ագարակի կոմբինատի պոչանքը»:**

Մեղրիում առավել մտահոգիչն այսօր Տաշտուն գյուղի հարեւանությամբ հանքաքարի վերամշակման արտադրամասի կառուցումն է: Շահագործողը 2012-ի նոյեմբերին ստեղծված «ԱՏ Մետալս» ՍՊ ընկերությունն է, որպես հիմնադիրներ գրանցված են՝ Դավիթ Գրիգորյանը, «Վենտմայն» ՍՊԸ-ն, «ԱՏ-Սպեցտեխնոլոգիա» ՍՊԸ-ն, «Ավիատեխնոլոգիա» ԳՀՄ ՓԲԸ-ն: «ՎԵՆՏՄԱՅՆ» ՍՊԸ-ն գրանցվել է 2011թ. մայիսին, հիմնադիրներն են՝ Հայկ Մեժլումյանը, Կարեն Հովսեփյանը եւ Վարդան Հովսեփյանը: «ԱՏ-Սպեցտեխնոլոգիա» եւ «Ավիատեխնոլոգիա» ԳՀՄ-ն ռուսական ընկերություններ են, եւ երկուսն էլ պատկանում են Մուլին եղբայրներին՝ Գենադի եւ Սերգեյ: Compromat.ru կայքի տեղեկություններով՝ Մուլինները հայտնի են իրենց մեքենայություններով. դեռ 2000-ին նրանց պատկանող «Ստուպինսկի մետաղագործական ընկերությունում» ստուգումները բացահայտել են մի շարք կեղծիքներ եւ խախտումներ, Սերգեյ Մուլինի դեմ հարուցվել էր քր.գործ: Նա փախել էր արտասահման, բայց հետագայում նրանց կրկին հաջողվել է կարգավորել իրենց բիզնեսը: Գենադի Մուլինը գտել է «ճիշտ գործընկեր» եւ 2005-ին 50/50 բաժնեմասով գրանցել է «Ավիատեխնոլոգիան»: Կայքում չի նշվում, թե կոնկրետ ով է Մուլինների հովանավորը, բայց հայտնի է, որ նրանք սերտորեն համագործակցում են «Ռոսօբորոնէքսպորտ» (Рособоронэкспорт) ԲԲ ընկերության հետ, որը մտնում է «Ռոստեխ» կորպորացիայի մեջ՝ Ռուսաստանում ռազմական սպառազինության, տեխնոլոգիաների արտահանմամբ եւ ներկրմամբ զբաղվող միակ պետական միջնորդը: Սյունիքի հանքերի մասին «ԱՐ» հեռուստաընկերությունը մի ֆիլմ պատրաստեց, թե ինչպես են Լիճքի բնակիչների ստորագրությունը կեղծել, եւ այդ ֆիլմը 24 ժամ էլ չմնաց համացանցում, հանել տվեցին: «**Մինչեւ հիմա անընդհատ ականատես եմ եղել ապօրինությունների, թե նախագծեր կազմելիս ինչպես են կեղծել թվերը, հորինած թվեր են բերել, թերհաշվարկների ֆանտաստիկ կարողություններ են դրսեւորել, բայց Տաշտունի դեպքում «ԱՏ Մետալսը» ոչ նախագիծ ունի, ոչ այլ փաստաթուղթ, միանգամից սկսել է քանդել ու կառուցում է հարստացուցիչ գործարանը»,** – ասում է Հ.Սանասարյանը՝ նշելով, որ Տաշտունում ընկերության գրասենյակում փաստաթղթեր չեն ներկայացրել, պատճառաբանել են, թե փաստաթղթերը Երեւանի գրասենյակում են, մինչդեռ այստեղ էլ հայտարարել են, թե դրանք Տաշտունում են. **«Հենց այս պահին, մինչ մենք զրուցում ենք, նրանք անում են իրենց ապօրինի-հանցագործ աշխատանքը՝ աղտոտում են Մեղրի գետի վտակ Տաշտուն լեռնային գետը»:** Կանաչների միությունը բազմիցս դիմել է ՀՀ կառավարություն, դատախազություն, բայց ոչ մի գոհացուցիչ պատասխան չի ստացել: «ԱՏ Մետալս» ընկերության ապօրինության առումով ՀՀ գլխավոր դատախազին (ինչպես նաեւ՝ Սյունիքի ոստիկանություն) ուղղված միության դիմումներին, ի վերջո, ըստ Հ.Սանասարյանի, պատասխանել են, թե Տաշտունի գյուղապետին պետք է պատժեին՝ ապօրինի շինարարություն թույլատրելու համար, բայց քրեական գործի հարուցումը մերժվում է, քանի որ կատարված արարքը հանրության համար վտանգավոր լինելուց դադարել է: Այս «խեղկատակ» պատասխանը ստանալուց հետո 2013 թ. հոկտեմբերի 7-ին «Կանաչները» դիմել են նոր գլխավոր դատախազ Գեւորգ Կոստանյանին, բայց դեռեւս որեւէ պատասխան չկա: Հ.Սանասարյանը մատնանշում է նաեւ «ԱՏ Մետալսի» հանդեպ պաշտոնյաների առանձնահատուկ բարյացակամությունը՝ հանուն այդ ընկերության կեղծում են փաստաթղթեր, առանց հիմքերի որոշում են կայացնում, կառավարությունը 2 անգամ հարկային արտոնություն է տվել, որ հանքարդյունաբերական սարքավորումներ ներկրեն, մինչդեռ դա կարելի է անել միայն այն դեպքում, երբ տվյալ նախագիծն ամբողջությամբ հաստատված է եւ օրինական ճանապարհ է անցել: **«Կառավարությունը՝ ի դեմս վարչապետի, դրան գնում է կա՛մ իր սեփականության դեպքում, կա՛մ վերեւից կարգադրության առկայության: Մենք գործ ունենք պետական ունեցվածքի կողոպուտի, տարածքների ավերման ու թունավորման հետ, սա պետական հանցագործություն է»,** – հավելում է Հ.Սանասարյանը:

**ԳԱՅԱՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ**
**168.am, 1 ապրիլի 2014թ.**

Սյունյաց երկիր

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 06 28 02:
Էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում:

Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել:

Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 21.04.2014թ.: